

ԱՊՕՐԻՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ, 2021Թ.

Առաջարկ

Ապօրինի ֆինանսական հոսքերը (ԱՖՀ) բազմաթիվ ձևերով ազդում են երկրի տնտեսական և սոցիալական զարգացման վրա: Կապիտալի չփաստաթղթավորված փոխուստները որևէ երկրից և դեպի այդ երկիր, ինչպես նաև երկրի ներսում, լուրջ հետևանքներ են ունենում պետական եկամուտների վրա. կապիտալ, որը հակառակ դեպքում կարող էր ներդրվել պետական ծախսերի և տնտեսական ու սոցիալական բարեփոխումների այլ ձևերի մեջ: Ապօրինի ֆինանսական հոսքերը, մասնավորապես նրանք, որ կապված են կազմակերպված հանցավորության հետ, նույնպես հանում են կապիտալը օրինական տնտեսությունից և կարող են պետությանը ստիպել ավելի շատ ռեսուրսներ ուղղել հանցավոր գործունեությունը կանխարգելելու և դրան արձագանքելու կամ գոհեցնելու օգնելու կամ փոխհատուցում տալու ուղղությամբ: ԱՖՀ-երի արդյունքում առաջացող ռեսուրսների և հարկային եկամուտների արտահոսքը թույլ չի տալիս ընդլայնել սոցիալական ապահովության հիմնական ծառայությունների և ենթակառուցվածքների ծրագրերը, որոնք նախատեսված են ապահովելու բոլոր քաղաքացիների, մասնավորապես շատ աղքատ բնակչության բարեկեցությունը և ստեղծելու հնարավորություններ նրանց համար:

Շատ զարգացող երկրներում ԱՖՀ-երը նշանակում են ոստիկանության աշխատանքի անարդյունավետություն, ավելի քիչ թվով հիվանդանոցներ, դպրոցներ, ճանապարհներ և աշխատատեղեր, ինչպես նաև ավելի ցածր կենսաթոշակներ: Հենց այս պատճառներով է, որ պետությունները պետք է շատ ավելի առաջանահերթորեն դիտարկեն ապօրինաբար ստացված ակտիվների առգրավումը և բռնագրավումը և այդպիսի վերականգնված ակտիվներն ուղղեն զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարմանը:

Պետք է մշակվեն ԱՖՀ-երին հակազդելու նոր հարացույցեր և քաղաքականություններ, որպեսզի ստեղծվի չընդհատվող աշխատանքային շղթա հետևյալ փուլերով՝ ապօրինաբար ձեռք բերված ակտիվների հետախուզում, սառեցում, առգրավում, բռնագրավում և վերականգնում, այնուհետև դրանց թափանցիկ կառավարում և լիկվիդացիա և վերջում ստացված հասույթի բաշխում զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարման ուղղությամբ: Սա է այն մեխանիզմը և հարացույցը, որը թույլ կտա երկրներին միլիարդավոր գումարներ վերադարձնել ակտիվներից և դրանք անմիջականորեն ուղղել, օրինակ, ավելի շատ դպրոցներ, հիվանդանոցներ, համայնքային անվճար կլինիկաներ կառուցելուն և ենթակառուցվածքները զարգացնելուն, ինչպես նաև ուսուցիչների, բուժքույրերի և բժիշկների այդքան անհրաժեշտ աշխատավարձերը վճարելուն: Նման քաղաքականությունները կարող են թույլ տալ պետություններին նաև զգալիորեն կրճատել գործազրկությունը երիտասարդության շրջանում: Մրանք բոլորը կարևոր գործոններ են երկրի զարգացման համար:

Ելնելով վերոգրյալից՝ Եվրոպական միությունը և ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը (UNICRI) մեկնարկում են ապօրինի ֆինանսական հոսքերի և ակտիվների վերականգնման ուսումնասիրությունների շարք: Այս ուսումնասիրությունները լույս են սփռում այն բանի վրա, թե չվերահսկվող ապօրինի ֆինանսական հոսքերի արդյունքում ինչ զգալի վնաս է հասցվում պետություններին, և ինչ կարևոր արժեք ունի այսպիսի ԱՖՀ-երի հետ կապված ապօրինաբար ձեռք բերված ակտիվների զավթումը որպես առաջնահերթություն դիտարկելը: ԵՄ-ի և UNICRI-ի հանձնառությունն է պետություններին տրամադրել էական աջակցություն և փորձ, որի կարիքը նրանք ունեն ապօրինի ֆինանսական հոսքերին ավելի արդյունավետ կերպով արձագանքելու համար: Ստեղծելով և իրականացնելով արձագանքման ավելի արդյունավետ մեխանիզմներ, որոնք նույնացվել են այս զեկույցների առաջարկությունների բաժնում՝ պետությունները կկարողանան թուլացնել կազմակերպված հանցավորության ազդեցությունը, ինչպես նաև՝ զգալի քանակով ֆինանսական միջոցներ ներարկել զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարման ուղղությամբ:



Լորենս Մտերեդիթ

Արևելյան հարևանության հարցերով տնօրեն
Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինություն



Անտոնիա Մարի Դե Մեո

Տնօրեն
UNICRI

ԱՊՕՐԻՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում

Համառոտ նկարագիր

Կազմակերպված հանցավորության արդյունքում ստեղծվում է զգալի քանակով ապօրինի եկամուտ և հասույթ ողջ աշխարհում և Եվրոպայում: Չնայած այն փաստին, որ հանցավորության ընդհանուր մակարդակը Հայաստանում ավելի ցածր է, քան Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում, երկրի ռազմավարական դիրքը Եվրոպայի, Միջին Արևելքի և Ասիայի խաչմերուկներում գրավիչ է կազմակերպված հանցավոր խմբերի համար: Ու թեև դժվար է ճշգրտորեն չափել եկամուտ ստեղծող հանցավորության մակարդակը, այս հետազոտության մեջ նույնացվել են հիմնական խնդրահարույց ոլորտները՝ փողերի լվացում, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն և մարդկանց թրաֆիքինգ և կոռուպցիա: Այդ պատճառով անհրաժեշտ է թափանցիկություն պետական հատվածի անբասիրությունը խթանելու համար և ավելի մեծ ուշադրության կենտրոնացում ապօրինաբար ձեռք բերված ակտիվների առգրավման, բռնագրավման և վերականգնման վրա:

Չնայած Հայաստանում դեռ չի ստեղծվել հատուկ նախատեսված Ակտիվների վերականգնման գրասենյակ (ARO), բայց Հայաստանը լուրջ առաջընթաց է գրանցել ՖԱԹՖ-ի հանձնարարականների պահանջները կատարելու առումով: Երկրում իրականում գործում են որոշ ստորաբաժանույններ և անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են կազմակերպված հանցավորության, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համար: Միջազգային համայնքը դեռևս շատ անելիք ունի, և ապօրինաբար ձեռք բերված ակտիվների առգրավման, բռնագրավման և վերականգնման վրա ավելի մեծ ուշադրության կենտրոնացումը կարևոր է: Քանի որ զարգացող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, ԱՖՀ-ները նշանակում են ավելի քիչ թվով հիվանդանոցներ, դպրոցներ, ոստիկանության աշխատանքի անարդյունավետություն, չկառուցվող ճանապարհներ, չվճարվող կենսաթոշակներ և ավելի քիչ թվով աշխատատեղեր, վերականգնված ակտիվների վերաներդրումը զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարման ուղղությամբ կարևոր է ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Հիմնական հետևություններ

- Հայաստանում շրջանառվող հաշվարկված ապօրինի ֆինանսական հոսքերի միայն 10%-ի առգրավումը և բռնագրավումը թույլ կտա ամբողջությամբ ֆինանսավորել Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի պլանավորված վերակառուցումը, ինչպես նաև կառուցել սարքավորումներով հագեցած ինը բժշկական կենտրոն և ավելի քան 100 ամբուլատոր բժշկական կենտրոն գյուղական համայնքներում:
- Դա Հայաստանին թույլ կտա նաև վճարել 38 000 ուսուցչի մեկ տարվա աշխատավարձը կամ կառավարությանը հնարավորություն կտա ամրացնել և վերակառուցել ավելի քան 50 դպրոց, ինչից օգուտ կստանա ավելի քան 60 000 աշակերտ:
- Այդպիսի վերականգնված ակտիվներով կարելի է ֆինանսավորել ենթակառուցվածքային կարևոր ծրագրեր, օրինակ, ամեն տարի իրականացնել ավելի քան 430 կմ երկարությամբ ավտոճանապարհների վերանորոգում:
- Հայաստանը պետք է դիտարկի Ակտիվների վերականգնման կենտրոնացված գրասենյակ (ARO) ստեղծելու մեխանիզմներ ընդունելու և իրականացնելու հարցը: Դա թույլ կտա մեկ տանիքի տակ համախմբել տարբեր շտեմարաններին մուտք ունեցող աշխատակիցների: Այդպես ակտիվների վերականգնման գրասենյակը կպատրաստի ամփոփ հաշվետվություններ լուրջ հանցավոր գործունեության մեջ կասկածվող անձանց կամ նրանց հանցակիցների կողմից տնօրինվող ակտիվների նկատմամբ օրենքի կիրառման համար՝ հաշվի առնելով այն փաստը, որ ակտիվներ «լվացողները» ակտիվներն իրենց սեփական անվամբ չեն «լվանում»:

- Հաշվի առնելով այն, որ փողերի լվացման գործերով վճիռները հաճախ կայացվում են տարիների ընթացքում, անհրաժեշտ է դիտարկել ակտիվները առանց պատժամիջոցի առգրավելու և բռնագրավելու (բռնագրավման քաղաքացիական վարույթ) մեխանիզմների ստեղծումը կամ ուժեղացումը: Այդ մեխանիզմները կարող են զգալիորեն կրճատել ակտիվները բռնագրավելու ժամանակը՝ ամրապնդելով հանրության վստահությունը դատական համակարգի արդյունավետության և զարգացման խիստ առաջնահերթ կարիքների ֆինանսավորման թափանցիկության նկատմամբ:
- Անհրաժեշտ է դիտարկել նաև ակտիվների վերականգնման և կառավարման գործընթացում միջազգային և տարածաշրջանային համագործակցության

ամրապնդումը, մասնավորապես՝ այլ կարևոր երկրների ոստիկանական և դատական համակարգերի առանցքային ներկայացուցիչների հետ կանոնավոր դեմատդեմ երկխոսությունների միջոցով:

- Մեծ ուշադրություն պետք է դարձնել Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի համատեղ մշակած *«ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի Գլուխ II-ի (Կանխարգելում) և Գլուխ V-ի (Ակտիվների վերականգնում) իրականացման վերաբերյալ»* 2020թ. զեկույցում ներկայացված առաջարկությունների ընդունմանը (միջազգային տեխնիկական աջակցությամբ), քանի որ դա կամրապնդի Հայաստանի կառավարության դիրքորոշումը կոռուպցիայի և այլ լուրջ հանցագործությունների դեմ պայքարում:

Հապավումներ

FMS	Ֆինանսական մշտադիտարկման ծառայություն
UNICRI	ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ	դոլար Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար
ԱՖՀ-եր	Ապօրինի ֆինանսական հոսքեր
ԳՖԲ	Գլոբալ ֆինանսական բարեվարքություն
ԵԱՀԿ	Եվրոպայում Անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀՀ դրամ	դրամ (Հայաստանի դրամական միավորը)
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱՆԻՎԱԼ	ԵՄ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների գնահատման հանձնաժողովի փորձագետներ
ՄԶԻ	Մարդկային զարգացման ինդեքս
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում/ահաբեկչության ֆինանսավորում
ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների հատուկ աշխատախումբ

Բովանդակություն

Առաջաբան	1
Հապավումներ	4
1. Ընդհանուր տեղեկություններ ապօրինի ֆինանսական հոսքերի մասին և ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնումը.....	6
1.1 Ներածություն	7
<i>Ապօրինի ֆինանսական հոսքերի սահմանումը</i>	<i>7</i>
<i>Ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնումը</i>	<i>8</i>
1.2 Միջազգային կանոնակարգեր և հանձնարարականներ	10
2. Ընդհանուր տեղեկություններ Հայաստանում ապօրինի ֆինանսական հոսքերի և կազմակերպված հանցավորության մասին.....	12
2.1 Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի մասին	13
<i>Աշխարհագրական և տարածաշրջանային համատեքստը</i>	<i>13</i>
<i>Սոցիալ-տնտեսական համատեքստը.....</i>	<i>13</i>
<i>Քաղաքական և կառավարման համատեքստը</i>	<i>14</i>
2.2 Ապօրինի ֆինանսական հոսքերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը Հայաստանում.....	14
3. Ապօրինի ֆինանսական հոսքերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը Հայաստանում.....	19
3.1 Հայաստանի իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը	20
<i>Իրավական համակարգը</i>	<i>20</i>
<i>Ինստիտուցիոնալ համակարգը</i>	<i>21</i>
3.2 Հայաստանում իրականացվող միջոցառումների համապատասխանությունը միջազգային միջոցառումներին և հանձնարարականներին.....	22
3.3 Հայաստանի ներուժը կազմակերպված հանցավոր գործունեության, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ակտիվների առեցման, առգրավման, բռնագրավման և վերականգնման գործում.....	22
4. Ապօրինի ֆինանսական հոսքերի ազդեցությունը և արժեքը Հայաստանում	24
4.1 Ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառած վնասի գնահատումը.....	25
<i>Տնտեսությանը հասցվող վնասը</i>	<i>25</i>
<i>Հասարակությանը և պետական կառավարմանը հասցվող վնասը</i>	<i>26</i>
<i>Ֆիզիկական վնասը</i>	<i>26</i>
4.2 Հայաստանի համար և Հայաստանում ԱՖՀ-երի ուղղակի արժեքի հաշվարկները	27
4.3 Վերականգնված ակտիվների ներդրումը Հայաստանի զարգացման համար	28
<i>Առողջապահության ոլորտ</i>	<i>29</i>
<i>Կրթական ոլորտ</i>	<i>30</i>
<i>Տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտ.....</i>	<i>31</i>
5. Եզրակացություններ և առաջարկություններ	33
Գրականություն և ծանոթագրություններ	38

1. Ընդհանուր տեղեկություններ ապօրինի ֆինանսական հոսքերի մասին և ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնումը



1.1 Ներածություն

Այս հետազոտությունն ուսումնասիրում է Հայաստանում կազմակերպված հանցավոր գործունեության արդյունքում ստեղծվող ապօրինի ֆինանսական հոսքերը (ԱՖՀ): Այն տրամադրում է ընդհանուր տեղեկություններ երկրում կազմակերպված հանցավորության մասին և ներկայացնում է ԱՖՀ-երի դեմ պայքարի և ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնման իրավական և գործառնական առկա շրջանակները: Ակտիվների վերականգնման արդյունավետ քաղաքականությունը հանդիսանում է ԱՖՀ-երի դեմ պայքարի և ԱՖՀ-երի պատճառած վնասը մեղմելու կարևոր բաղադրիչը:

Այս հետազոտության հիմնական նպատակն է՝ տեղական իշխանություններին, ինչպես նաև այլ առանցքային շահագրգիռ կողմերին տրամադրել թիրախավորված առաջարկություններ՝ կազմակերպված հանցավորության (և ըստ կիրառելիության՝ բարձր մակարդակի կոռուպցիայի) հետ կապված ակտիվների էֆեկտիվ և արդյունավետ առգրավման և բռնագրավման մեխանիզմներ ստեղծելու և դրանք ամրապնդելու վերաբերյալ:

Այս հետազոտությունում ներկայացվում են նաև առաջարկություններ վերականգնված ակտիվների արդյունավետ և թափանցիկ կառավարումն ուժեղացնելու վերաբերյալ, այդ թվում՝ առաջարկություններ այդպիսի ակտիվները զարգացման խիստ առաջնահերթ կարիքներին ուղղելու վերաբերյալ: Հայաստանում խիստ առաջնահերթ են զբաղվածության, առողջապահության և ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում առկա կարիքները:

Այս հետազոտության տվյալների հավաքագրումն իրականացվել է 2020թ. մայիսից հոկտեմբեր ամիսներին: Տվյալների հավաքագրումն իրականացվել է բաց աղբյուրներից գրասենյակային ուսումնասիրության, ինչպես նաև պետական ծառայողներից, քաղաքացիական հասարակության անդամներից և այլ առանցքային շահագրգիռ կողմերից կարծիքներ հավաքելու միջոցով:

Ապօրինի ֆինանսական հոսքերի սահմանումը

Ապօրինի ֆինանսական հոսքերի սահմանման վերաբերյալ ընդհանուր համաձայնություն չկա, քանի որ այն ներառում է տարբեր գործողություններ և վարքագծեր, որոնք արտացոլում են ապօրինի միջազգային առևտրի և ֆինանսների բարդ ու բազմազան բնույթը:¹ Մատչելի և համատարած ընդունված սահմանման բացակայությամբ է բացատրվում այդ երևույթը վերլուծելու և հետևաբար՝

թիրախային արձագանքներ մշակելու դժվարությունը: Աֆրիկայի համար ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովը (ԱՏՀ) նշել է, որ տերմինաբանական հստակության այս բացը սահմանափակում է արդյունավետ միջոցառումները մշակելու հնարավորությունը:² Այս դժվարության մեկ այլ պատճառը վերաբերում է ԱՖՀ-երի քանակական չափման վիճակագրական տեսանկյունից չափազանց բարդ իրագործելի լինելուն: Դա այն պատճառով է, որ հանցագործները միտումնավոր թաքցնում կամ քողարկում են ԱՖՀ-երը և առնչվող հանցագործությունները՝ փորձելով պաշտպանվել իրավապահ մարմինների միջամտություններից: Հետևաբար, հանցավոր գործողությունների մոդելը կազմելու համար հուսալի տեղեկություններ և անհրաժեշտ տվյալներ հավաքագրելու փորձը նույնպես բարդ գործընթաց է, ինչն անհրաժեշտ է ճշգրիտ արձագանքների մշակման համար:³

Չնայած այս սահմանափակումներին՝ այս հետազոտության և սպառնալիքին դիմակայելու համալիր և օգտակար արձագանքներ մշակելու հարցում պետություններին օգնելու նպատակով ԱՖՀ-երը լայն իմաստով սահմանվում են որպես եկամուտ, հասույթ և ցանկացած այլ ակտիվ, որոնք ձևավորվել են հետևյալ գործողությունների արդյունքում.

- **Կոռուպցիա**՝ ներառյալ պետական ծառայողների կողմից կոռուպցիոն, կաշառակերության, կոռուպցիայի և պետական միջոցների յուրացումից գոյացած եկամուտը,
- **Ապօրինի առևտուր**՝ ներառյալ հարկերից խուսափելու, առևտրային գործողություններին վերաբերող կեղծ տվյալներ, կեղծ հաշվետվություններ ներկայացնելու և թերհայտարարագրման ու առևտրային գործարքների միջոցով փողերի լվացման արդյունքում ստացված եկամուտները,
- **Այլ տեսակի լուրջ հանցագործություն**՝ ներառյալ հանցավոր գործողությունների, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության, մաքսանենգության, կեղծման, շորթման (կոչվում է նաև հանցավոր հովանավորչություն կամ դրամաշորթություն) և ահաբեկչության ֆինանսավորման արդյունքում ստացված եկամուտները:⁴

Այս դասակարգման մեջ, որը 2013թ. ՄԱԿ-ի ԱՏՀ-ի կողմից օգտագործված դասակարգման թեթևակի փոփոխված տարբերակն է, նշվում է ոչ միայն ապօրինի ֆինանսական հոսքերի բազմազան ու զարգացող բնույթի, այլև այնպիսի բազմակողմանի (համալիր) արձագանքների անհրաժեշտության մասին, որոնք տարբեր անկյուններից կլանվեն սպառնալիքը, օրինակ՝ կիրառելով ոչ միայն քրեական արդարադատության միջոցառումներ:⁵

Դասակարգման մեջ անտեսված է նաև այն բնութագրումը, թե ԱՖՀ-երը պետք է միայն միջազգային բնույթ ունենան. նույնիսկ որևէ կոնկրետ երկրում տեղի ունենալու դեպքում ԱՖՀ-երը կարող են զգալի կորուստներ և փասաներ հասցնել ազգային տնտեսությանը, առողջապահական և կրթական համակարգերին, կրճատել աշխատատեղերը: ԱՖՀ-երի ձևերի դինամիկան տարբեր երկրներում տարբեր է՝ կախված ապօրինի հոսքերի մուտքային, էլքային կամ տվյալ երկրի ներսում շրջանառությունից: Բարձր արժեք ունեցող ապօրինի հոսքերը, օրինակ, թմրամիջոցների առևտուրը, այնուամենայնիվ, փոխկապակցված են այլ տեսակի հանցավորության, օրինակ, կոռուպցիայի ավելի բարձր մակարդակների հետ:⁶

Այս հետազոտությունը կենտրոնանում է Հայաստանում հանցավոր գործողություններից ստացվող եկամուտների, հասույթի և այլ ակտիվների ուսումնասիրության վրա: Հաշվի առնելով ԱՖՀ-երի փոխկապակցված բնույթը՝ այս հետազոտության մեջ ուսումնասիրվում են նաև կոռուպցիայից և առևտրից ձևավորվող ակտիվները, ինչը թույլ կտա ներկայացնել Հայաստանում ԱՖՀ-երի շրջանակը: Փողերի լվացումը կարևոր գործիք է, որն օգտագործում են կազմակերպված հանցավոր խմբերը՝ ապօրինաբար ձեռք բերվող եկամուտը տեղափոխելու և հանցավոր գործունեությունը ֆինանսավորելու նպատակով: Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության միջև նաև ամուր կապ կա, քանի որ երկուսի համար էլ խթան են հանդիսանում պետական կառավարման և օրենքի նույն սահմանափակումները:

Ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնումը

Ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնումը կարևոր է կազմակերպված հանցավորության և ԱՖՀ-երի դեմ պայքարի համար, քանի որ գրկում է հանցագործներին իրենց ֆինանսական եկամուտներից և կարող է ապագա հանցագործությունները կանխարգելելու միջոց լինել (վերացնելով հանցագործությունների ֆինանսական շարժառիթը): Ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնումը կարող է օգնել նաև մեղմել ԱՖՀ-երի զրահավար ազդեցությունը՝ այդ ակտիվները լիկվիդացնելու և հասարակության բարեկեցության համար կրկին ներդնելու ու զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարմանն ուղղելու միջոցով: Այս հետազոտության նպատակներով ակտիվների վերականգնման գործընթացը ներառում է ապօրինաբար ձեռք բերված ակտիվների հետախուզումը, ստեղծումը, առգրավումը, բռնագրավումը և կառավարումը:

Ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնման գործում համաշխարհային առաջընթացն առնվազն համեատ է: 2012թ. ՏՀԶԿ-ն անցկացրել է հարցում, որով որոշել է, թե 2010 թվականից մինչև 2012 թվականի հունիսը ընկած ժամանակահատվածում որքան են կազմել ստեղծված և վերադարձված ակտիվները: Այդ ժամանակահատվածում ստեղծվել է ընդհանուր մոտ 1.4 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ կոռուպցիայի հետ կապված ակտիվ: Վերադարձված ակտիվների իմաստով 2010թ. մինչև 2012թ. հունիսն ընկած ժամանակահատվածում օտարերկրյա իրավապահ մարմիններին վերադարձվել է ընդհանուր 147 մլն ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշները համեմատելի չեն լայն տարածում գտած այն հաշվարկի հետ, ըստ որի աշխարհում փողերի լվացման ընդհանուր ծավալը կարող էր համաշխարհային ՀՆԱ-ի մոտավորապես երկու կամ հինգ տոկոսը կազմել: Միայն 2009 թվականին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները ըստ հաշվարկների կազմում էին համաշխարհային ՀՆԱ-ի 3.6%-ը, որից 2.7%-ը (կամ 1.6 միլիարդ ԱՄՆ դոլար) լվացվել էր:⁷

Ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնման գործում Եվրոպական միությունը (ԵՄ) նույնպես համեստ առաջընթաց է գրանցել: Եվրոպայի հաշվարկներով՝ կազմակերպված հանցավոր խմբերի շահույթը ԵՄ-ում կազմում է տարեկան 110 միլիարդ եվրո:⁸ Կոռուպցիան տարեկան 120 միլիարդ եվրոյի փասս է հասցնում ԵՄ տնտեսությանը:⁹ Եվրոպայի հաշվարկներով՝ ԵՄ-ում ամեն տարի բռնագրավվում է մոտ 1.2 միլիարդ եվրո, որը կազմում է ԵՄ-ի ՀՆԱ-ի 0.009%-ը: 200 միլիարդ եվրոյի ՀՆԱ ունեցող երկրի համար (օր.՝ Ֆինլանդիան 2014թ.) այս գումարը կազմում է մոտ 17.7 միլիոն եվրո, մեկ տրիլիոն եվրոյի ՀՆԱ ունեցող երկրի համար (օր.՝ Իսպանիան 2014թ.) այս թիվը կազմում է մոտ 88.7 միլիոն եվրո, մոտ 2.2 տրիլիոն եվրոյի ՀՆԱ ունեցող երկրի համար (օր.՝ Ֆրանսիան 2014թ.) այս թիվը կազմում է մոտ 195.2 միլիոն եվրո:

Միայն կոռուպցիայի գծով լայնորեն ընդունված հաշվարկի համաձայն համաշխարհային կոռուպցիայի ծավալները ամեն տարի կազմում են մոտ 1.5-ից 2 տրիլիոն ԱՄՆ դոլար:¹⁰

Կոռուպցիան, կաշառակերությունը, կողոպուտը, հարկերից խուսափումը և ապօրինի ֆինանսական հոսքերի այլ ձևերը ամեն տարի 1.26 տրիլիոն ԱՄՆ դոլարի փասս են հասցնում զարգացող երկրներին: Կոպիտ հաշվարկով դա Շվեյցարիայի, Հարավային Աֆրիկայի և

Բելգիայի տնտեսությունների ընդհանուր ծավալն է և բավարար գումար է օրական 1.25 ԱՄՆ դոլարից պակաս գումարով ապրող 1.4 միլիարդ մարդու աղքատությունից հանելու և առնվազն վեց տարի աղքատության շեմից բարձր պահելու համար:¹¹

Մեկ միլիոն ԱՄՆ դոլար կաշառքը կարող է արագորեն 100 միլիոն ԱՄՆ դոլարի փասս պատճառել աղքատ երկրի տնտեսության զարգացմանը խոչընդոտող ձախողված ծրագրերի և ոչ նպատակահարմար ներդրումային որոշումների արդյունքում:¹²

Այնուամենայնիվ, նման հաշվարկներին պետք է զգուշորեն վերաբերվել: Դրանք նախատեսված են փողերի լվացման ծավալների մասին պատկերացում տալու համար, որը ԱՖՀ-երի մի մասն է միայն: Գործարքների ապօրինի բնույթի հետևանքով չկա և հավանական էլ չէ, որ երբևէ կլինի ճշգրիտ վիճակագրություն, և հետևաբար՝ հնարավոր չէ ամեն տարի ողջ աշխարհում լվացվող փողերի ծավալի ամփոփ հաշվարկ կազմել: Այդ պատճառով Ֆինանսական միջոցառումների հատուկ աշխատախումբը (ՖԱԹՖ) սրա վերաբերյալ ցուցանիշներ չի հրապարակում: Այնուամենայնիվ, ընդհանուր համաձայնություն կա այն բանի վերաբերյալ, որ ԱՖՀ-երը ողջ աշխարհում փասս են հասցնում տնտեսություններին և խոչընդոտում են զարգացումը:


Ինչպես ԱՖՀ-երն են արգելքներ ստեղծում զարգացման համար, այնպես էլ ԱՖՀ-երի հետ կապված ակտիվների վերականգնումը կարող է նպաստել զարգացմանը: Թե՛ երկրից դուրս, թե՛ երկրի ներսում ծավալվող

լուրջ հանցավոր գործունեության հետ կապված ապօրինաբար ձեռք բերված ակտիվների միայն մի փոքր մասի վերականգնումը կարող է զարգացող երկրներին ապահովել այդքան անհրաժեշտ լրացուցիչ ռեսուրսներով: Այս համատեքստում ապօրինաբար ձեռք բերված ակտիվների հետախուզումը, առգրավումը, բռնագրավումը և վերականգնումը, բացի հանցավորության կանխարգելման արդյունավետ միջոց լինելուց, կարող է ապահովել ֆինասավորում զարգացման խիստ առաջնահերթ կարիքների, օրինակ, առողջապահության, կրթության ոլորտների կամ ենթակառուցվածքների զարգացման կարիքների բավարարման համար:

Բազմաթիվ խոչընդոտներ, ինչպիսիք են, մասնավորապես, ակտիվների վերականգնման միջառնամանային համագործակցության խոչընդոտները, հանցավոր կազմակերպություններին և կաշառակեր պաշտոնյաներին թույլ են տվել օգտվել նման թույլ կողմերից: Ակտիվների հանցավոր գործողության հետ կապված լինելու հանգամանքի ապացուցումը կարող է բարդ և երկարատև գործընթաց լինել, ինչն ի վերջո կհանգեցնի պետական հաստատությունների նկատմամբ հանրության վստահության նվազմանը: Այնուամենայնիվ, ապօրինաբար ձեռք բերված ակտիվների (արտասահմանում կամ տվյալ երկրի տարածքում գտնվող) որոնման, սառեցման, առգրավման և բռնագրավման հարցերում ամենամեծ հաջողությունը գրանցել են այն երկրները, որոնք ընդունել են բռնագրավման համար քրեական արդարադատության գործընթացները արագացնող մեխանիզմներ,¹³ ինչպես նաև ակտիվները ոչ քրեական դատապարտման արդյունքում բռնագանձելու մեխանիզմներ:¹⁴

Գնալով ավելանում է արդարադատության այն համակարգերի թիվը, որոնք ընդունել են անբացատրելի հարստության կամ ապօրինի հարստացման համար

Ըստ հաշվարկների՝ փողերի լվացման արդյունքում ստացված համաշխարհային եկամտի տարեկան գումարն ավելի մեծ է, քան հետևյալ երկրների ընդհանուր ՀՆԱ-ն (2019թ. տվյալներով).



1. Ընդհանուր տեղեկություններ ապօրինի ֆինանսական հոսքերի մասին

քրեական գործ հարուցելու մեխանիզմներ:¹⁵ Շատ երկրներում այժմ գնահատում են հատուկ նախատեսված Ակտիվների վերականգնման գրասենյակների (ARO) ստեղծման կարևորությունը, և մասնավորապես այն, որ այդ գրասենյակների աշխատակիցները մուտք ունենան տվյալների բազմաթիվ շտեմարաններին (օր.՝ տրանսպորտային միջոցների հաշվառման, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, հարկային տեղեկությունների, մաքսային տվյալների շտեմարանները, քրեական գործերի արխիվը): Ակտիվների վերականգնման այդպիսի գրասենյակների հիմունքը թույլ կտա կատարել անձի, ինչպես նաև ընտանիքի անդամների կամ լուրջ հանցավոր գործունեությանը մասնակցություն ունենալու մեջ կասկածվող անձանց գործընկերների ակտիվների միջգերատեսչական ուսումնասիրում (երբ անձը ապօրինաբար ձեռք բերված ակտիվ է լվանում, հիմնականում այն չի գրանցում իր անունով):

Փորձը ցույց է տվել, որ ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական վարույթով բռնագրավման համար արդյունավետ է նաև դատական գործերում մասնագիտացած ֆինանսական վերլուծաբանների պատրաստումը և ուսուցումը, որոնք օգնում են մեղադրող կողմին ապացուցել ֆինանսական հանցագործությունները: Պետությունները, որոնք մշակել են միջգերատեսչական

համագործակցության հիմնավոր մեխանիզմներ, նույնպես ավելի մեծ հաջողություն են գրանցել ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերականգնման գործընթացում:¹⁶

1.2 Միջազգային կանոնակարգեր և հանձնարարականներ

ԱՖՅ-երի դեմ պայքարելու համար մշակվել են բազմաթիվ միջազգային կոնվենցիաներ, ստանդարտներ և ստեղծվել են մարմիններ: Դրանք ՄԱԿ-ի կոնվենցիաներն են, որոնց սահմանած ստանդարտները պետք է ընդունեն բոլոր երկրները, ինչը թույլ կտա խուսափել տարբեր տեսակի ԱՖՅ-երի համար ապահով թաքստոց տրամադրելուց: Դրանք նաև համաձայնագրեր են և սահմանափակ անդամությամբ կազմակերպություններ, որոնք սակայն ավելի մանրամասն միջոցառումներ են սահմանում. մի շարք այդպիսի համաձայնագրերի շնորհիվ հնարավոր է օգտակար և կարևոր փորձագիտական գնահատումներ իրականացնել ապահովելու պահանջների հետ համապատասխանությունը:

Մեղադրական դատավճռի հիման վրա և առանց մեղադրական դատավճռի արագացված բռնագրավման մեխանիզմներ

- Մեղքի ընդունման գործարք, հաշտության համաձայնություն կամ քրեական վարույթի վեճի այլ արագացված լուծում, որոնցով մեղադրյալից պահանջվում է վերադարձնել ապօրինաբար ձեռք բերված ակտիվները ավելի մեղմ պատժի (կամ ուրիշների կողմից ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու) դիմաց,
- Մեխանիզմներ, որոնք դատարաններին թույլ են տալիս արձակել ավելի մեծ ծավալով բռնագրավման օրդերներ Օրինակ՝ *օրդերի տրամադրում, որում նշվում է, որ լուրջ հանցավորության համար դատապարտված մեղադրյալի կողմից, ասենք, վերջին հինգ տարվա ընթացքում ձեռք բերված բոլոր ակտիվները ենթադրվում են որպես ապօրինաբար են ձեռք բերված, եթե մեղադրյալը չի հերքում այդ ենթադրությունը,*
- Մեղադրյալի՝ օրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագրավման օրդերներ, որի դեպքում պետությունը ցույց է տալիս, որ ձեռնարկել է բոլոր ողջամիտ միջոցները՝ գտնելու ապօրինաբար ձեռք բերված ակտիվները, սակայն չի կարողացել գտնել:

Լրացուցիչ արժեքավոր մեխանիզմներ կարող են լինել բռնագրավման առանձին քաղաքացիական վարույթը այն ակտիվների նկատմամբ, որոնք համարվում են ապօրինաբար ձեռք բերված (նման վարույթներում որոշակի ակտիվների՝ ապօրինի գործողությունների արդյունքում ստացված լինելու հանգամանքի ապացուցման բեռը ամեն դեպքում ի սկզբանե դրվում է պետության վրա, թեև ապացուցման պարտավորությունը ավելի փոքր է), բռնագրավման քաղաքացիական վարույթները, որոնք թեև չեն որոշում որևէ կոնկրետ անձի քրեական հանցակազմը կամ թույլ չեն տալիս դատավորին ազատազրկել որևէ մեկի, ունեն այն առավելությունը, որ վճիռը կայացվում է ամիսների ընթացքում, և ակտիվների վերադարձն ավելի արագ է տեղի ունենում՝ ակնհայտորեն տարբերվելով, օրինակ, փողի լվացման սովորաբար մի քանի տարի տևող քրեական գործից: Բռնագրավման քաղաքացիական վարույթ սկսելը և վճռի կայացումը (ապօրինաբար ձեռք բերված ակտիվների դեմ) ոչ միշտ է բացառում զուգահեռ քրեական գործի հարուցման և վճռի կայացման (որևէ անձի դեմ) հնարավորությունը:

2015թ. ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի ընդունեց Ադիս Աբեբայի գործողությունների ծրագիրը, որը հրավիրում է «համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին հրապարակելու ապօրինի ֆինանսական հոսքերի ծավալի հաշվարկները և կազմությունը»:¹⁷ Նույն ձևով «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ը և Կայուն զարգացման նպատակները (ԿՁՆ) կոչ են անում երկրներին հետևյալը.

- մինչև 2030 թ. զգալիորեն կրճատել ֆինանսների և զենքերի ապօրինի հոսքերը,
- էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով,
- զարգացնել արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատություններ,
- ուժեղացնել ներքին ռեսուրսների մոբիլիզացումը, այդ թվում՝ զարգացող երկրներին ցուցաբերվող միջազգային աջակցության միջոցով,
- մեծացնել գլոբալ մակրոտնտեսական կայունությունը,
- ուժեղացնել գողացված գույքը հետ վերցնելու և վերադարձնելու գործողությունները և պայքարել կազմակերպված հանցավորության դեմ:¹⁸

ՄԱԿ-ը ընդգծում է նաև ԱՖՀ-երի հաշվարկի մեթոդաբանության անհրաժեշտությունը, որը թույլ կտա բավարարել ԿՁՆ գլոբալ ցուցանիշների հիման վրա ձևավորվող տվյալներին ներկայացվող պահանջները:¹⁹

ԵՄ-ն և ՏՀԶԿ-ն նույնպես կարևոր դերակատարում ունեն առաջնահերթությունների սահմանման գործում, որոնք

երկրները պետք է կարևորեն փողերի լվացման և ԱՖՀ-երի սպառնալիքները առավել արդյունավետ կերպով կանխելու համար, ինչպես նաև՝ գույքի առգրավման և բռնագրավման մեխանիզմներն ուժեղացնելու անհրաժեշտության և հարկերից խուսափումը կանխելու անհրաժեշտության գործում:²⁰ Լրացուցիչ մեխանիզմները, ինչպիսին Քամդենի Ակտիվների վերականգնման միջգերատեսչական ցանցն է (և նման ցանցերը), ուստիկանությանը և դատախազությանը տրամադրում են շատ արժեքավոր աջակցություն և ապահովում են միջսահմանային երկխոսություն՝ կազմակերպված հանցավորության և բարձր օդակներում կոռուպցիայի հետ կապված ակտիվների զավթումն առավել արդյունավետ կերպով իրականացնելու համար:²¹

Ապօրինի ֆինանսական հոսքերին առնչվող հիմնական միջազգային բնութագրիչներ

- Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա՝ ընդունված 1988թ.
 - ՄԱԿ-ի Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիա՝ ընդունված 1999թ.
 - ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա՝ ընդունված 2000թ.
 - ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա՝ ընդունված 2003թ.
 - ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներ
-

2. Ընդհանուր տեղեկություններ Հայաստանում ապօրինի ֆինանսական հոսքերի և կազմակերպված հանցավորության մասին



2.1 Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի մասին



- Բնակչության թիվը կազմում է 2.9 միլիոն մարդ: Բնակչության ավելի քան 98%-ը հայ է և 97%-ը՝ քրիստոնյա²²
- Մայրաքաղաքը Երևանն է
- Պետական լեզուն հայերենն է
- Արժույթը դրամն է (ՀՀ դրամ)²³
- ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Համաշխարհային բանկի, ԱՄՆ-ի, ԵԽ-ի, ԱԳ-ի անդամ է (2009 թվականից): Հայաստանը 2014թ. անդամակցեց Եվրասիական տնտեսական ընկերակցության մաքսային միությանը, իսկ 2015թ.՝ Եվրասիական տնտեսական միությանը²⁴
- 1991թ. դուրս է եկել ԽՍՀՄ-ի կազմից և անկախություն է հռչակել

Աշխարհագրական և տարածաշրջանային համատեքստը

Հայաստանի Հանրապետությունը ցամաքով շրջապատված երկիր է՝ տեղակայված Եվրասիայի հարավկովկասյան տարածաշրջանում: Ընդհանուր տարածքը 29 743 կմ² է: Այն գտնվում է Հայկական բարձրավանդակում և արևմուտքում սահմանակցում է Թուրքիային, հյուսիսում՝ Վրաստանին, արևելքում՝ Ադրբեջանին և Իրանին և հարավում՝ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Նախիջևանին:

Սոցիալ-տնտեսական համատեքստը

Հայաստանի տնտեսությունը 1991թ. Խորհրդային Միությունից անկախանալուց հետո զգալի փոփոխությունների է ենթարկվել: Խորհրդային Միության կազմում Հայաստանի տնտեսությունը հիմնականում արդյունաբերական էր (քիմիական արդյունաբերություն, էլեկտրոնային սարքավորումներ, մեքենաշինություն, տեքստիլ արդյունաբերություն): Այդ ժամանակաշրջանում

երկրում զարգացավ ժամանակակից արդյունաբերական ոլորտ, որի արտադրած մեքենասարքավորումները, տեքստիլ արտադրանքը և այլ ապրանքները մատակարարվում էին արտահանման գործընկերներին հունքային նյութերի և էլեկտրաէներգիայի դիմաց²⁵ Դրանից հետո Հայաստանը խորհրդային ժամանակաշրջանի խոշոր ագրոարդյունաբերական համալիրներից անցում կատարեց փոքր ծավալի գյուղատնտեսության²⁶ Հայաստանի տնտեսությունը մեծ կախում ունի Ռուսաստանից, որը մեծ դեր ունի երկրի ռազմավարական նշանակության ակտիվների, այդ թվում՝ գազի բաշխման ցանցի, երկաթուղային ճանապարհների և հեռահաղորդակցման ոլորտի կառավարման մեջ²⁷

Անկախությունից մինչև 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը Հայաստանը համարվում էր հաջողված անցումային տնտեսության օրինակ շնորհիվ իր մակրոտնտեսական ձեռքբերումների և սոցիալ-տնտեսական զարգացման, ինչին նպաստել էին տնտեսության ազատականացմանն ուղղված բարեփոխումները և բարենպաստ արտաքին միջավայրի ստեղծումը²⁸ Ինչևէ, 2008 թվականին հաջորդող տասնամյակում երկրի տնտեսությունը բնութագրվում էր աճի ցածր տեմպով, ներդրումների ցածր և պարտքի հարաբերականորեն բարձր մակարդակներով, ինչպես նաև սոցիալ-տնտեսական այնպիսի պայմաններով, որոնք սահմանափակ ձևով դիմադրեցին վատթարացող իրավիճակին: 2017թ. աղքատության մակարդակը հասավ գրեթե 26%-ի, իսկ գործազրկությունը 2018 թվականի վերջին կազմում էր 16%²⁹

2019 թվականին Հայաստանի ՀՆԱ-ն աճեց 7.6%-ով և կազմում էր շուրջ 13.6 միլիարդ ԱՄՆ դոլար, որը 2007թ. հետո գրանցած աճի ամենամեծ ցուցանիշն էր, իսկ բանկերի հիմնական ցուցանիշները (ներառյալ ակտիվները) գրեթե կրկնապատկվեցին³⁰ Չնայած դրան՝ կանխատեսվում էր, որ 2020թ. ՀՆԱ-ն, պայմանավորված Covid-19 համավարակով, կնվազի -2.2%-ով, որից հետո կավելանա 0.7%-ով 2021 թվականին³¹ Ակնկալվում է, որ 2020 թվականի տնտեսության անկումը կտրուկ կմեծացնի գործազրկությունը, որը այս զեկույցը կազմելու պահին 16.6% էր³² Գործազրկությունը հիմնականում մեծ է քաղաքային շրջաններում և անհամաչափ բացասական ազդեցություն ունի երիտասարդության և կանանց շրջանում³³ 2018 թվականին աղքատության մակարդակը հաշվարկվում էր 23.5%, որը մոտ 2.2 տոկոսային կետով ցածր է 2017 թվականի ցուցանիշից³⁴ 2004-2018թթ. ծայրահեղ աղքատության ցուցանիշը նվազեց 77%-ով՝ 4.4%-ից հասնելով 1.0%-ի³⁵ Ակնկալվում էր, որ 2020 թվականին Covid-19 համավարակի և հաջորդած տնտեսական անկման հետևանքով աղքատության ցուցանիշը կավելանա 4.8 տոկոսային կետով³⁶

Հայաստանը մարդկային ներուժի բարձր մակարդակ ունեցող երկիր է: Դիտարկվող 189 երկրների և տարածքների շարքում երկիրը զբաղեցնում է 81-րդ տեղը, իսկ Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը կազմել է 0.760, որը 1990 թվականից ի վեր աճում է:³⁷ Մակայն տնտեսական անկախության և հարստության տեսանկյունից, այնուամենայնիվ, գենդերային անհավասարություն կա:³⁸ Ջինիի գործակցով չափված եկամտային անհավասարությունը Հայաստանում համեմատաբար ցածր է, բայց աճում է (2010թ. այն կազմել է 30.0, իսկ 2018թ.՝ 34.4):³⁹

Քաղաքական և կառավարման համատեքստը

Հայաստանը ներկայացուցչական ժողովրդավարությամբ խորհրդարանական հանրապետություն է: Մինչև 2018թ. ապրիլը ՀՀ Սահմանադրությունը հետևում էր կիսանախագահական հանրապետության մոդելին: Հայաստանի նախագահը պետության գլուխն է և ունի գործադիր իշխանության բարձրագույն լիազորություններ: Նա անուղղակի կերպով ընտրվում է յոթը տարի ժամկետով: Վարչապետը կառավարության ղեկավարն է և փոխվարչապետների հետ միասին կատարում է գործադիր իշխանության լիազորություններ: Վարչապետն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ ձայների մեծամասնությամբ: Օրենսդրական իշխանությունը վերապահված է Ազգային ժողովին, որը միապալատ խորհրդարան է:


2018թ. ապրիլ և մայիս ամիսներին «Թավշյա հեղափոխություն» անվամբ տեղի ունեցած խաղաղ ցույցերը նախկին վարչապետին ստիպեցին հրաժարական տալ տասը տարվա պաշտոնավարումից հետո: Նույն ամսում ընդդիմության առաջնորդը խորհրդարանի կողմից ընտրվեց վարչապետ իշխող կուսակցության դեմ գանգվածային բողոքի ակցիաներից շաբաթներ անց՝ վերափոխելով երկրում քաղաքական դրությունը: 2018թ. դեկտեմբերին հրավիրվեցին արտահերթ ընտրություններ՝ հեռացնելու խորհրդարանում մեծամասնություն կազմող Հանրապետական կուսակցությունը, «Իմ քայլը» դաշինքը 2018թ. դեկտեմբերին հրավիրվեցին արտահերթ ընտրություններ՝ հեռացնելու խորհրդարանում մեծամասնություն կազմող Հանրապետական կուսակցությունը, «Իմ քայլը» դաշինքը ստացավ ընդհանուր ձայների ավելի քան 70%-ը և Ազգային ժողովի 132 մանդատից 88-ը:⁴⁰ Նախկինում իշխող Հանրապետական կուսակցությունը մանդատ չստացավ: Վարչապետը խոստացավ պահպանել Հայաստանի ռազմավարական դաշինքը Ռուսաստանի հետ:⁴¹

Իր արտաքին քաղաքականությամբ Հայաստանի կառավարությունը փորձում է հավասարակշռել և համատեղել քաղաքական այլընտրանքային տարբերակները, որոնք հիմնականում Եվրոպական միություն (ԵՄ) և Ռուսաստանի միջև են՝ հաշվի առնելով իր գեոքաղաքական դիրքորոշումը: 2017 թվականին Հայաստանը և ԵՄ-ն ստորագրեցին Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որով նախատեսվում էր սերտ համագործակցություն մի շարք ոլորտներում, այդ թվում՝ էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության, առևտրի և ներդրումների ոլորտներում: Համաձայնագրով նախատեսվում է ամրապնդել նաև համապարփակ քաղաքական և տնտեսական համագործակցությունը և գործընկերությունը, այն սահմանում է ԵՄ-ի քաղաքականություններում, ծրագրերում և գործողություններում Հայաստանի ներգրավվածության մակարդակը:⁴²

2.2 Ապօրինի ֆինանսական հոսքերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը Հայաստանում

Հայաստանի ռազմավարական դիրքը Աֆրիկայի, Եվրոպայի, Միջին Արևելքի և Ասիայի խաչմերուկներում հատկապես գրավիչ է այն կազմակերպված հանցավոր խմբերի համար, որոնք ցանկանում են մաքսանենգ գործողություններ իրականացնել այդ տարածաշրջաններում կամ դրանց տարածքով:⁴³ Երկրում հանցավորության ընդհանուր մակարդակը ավելի ցածր է, քան Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում:⁴⁴ Մակայն երկիրը դեռևս առերեսվում է հանցագործությունների առաջնային մտահոգություն առաջացնող ոլորտների,⁴⁵ որոնք առանձնապես խոշոր չափերի ապօրինի եկամուտներ են ստեղծել⁴⁶ 2010-2013թթ. ընթացքում:⁴⁷ Խարդախությունը (ներառյալ կիբեռնահանցագործությունը), հարկերից խուսափումը, կեղծ վճարային գործիքներով գործարքները, ապօրինի ճանապարհով միջոցների յուրացումը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և մաքսանենգությունը հանցավոր գործողությունների այդ տեսակներից են:⁴⁸ Այս հանցագործությունները միասին հաճախ փողերի լվացման և բռնությամբ ուղեկցվող հանցանքների են հանգեցնում:⁴⁹ Մակայն ընդհանուր հանցավոր գործունեության արժեքի և ծանրության հաշվարկներ չկան:⁵⁰ Այդ պատճառով դժվար է գնահատել եկամուտներ ստեղծող հանցավորության

Կազմակերպված հանցավորությունը և Արևելյան գործընկերությունը



Հայաստանը անդամակցում է Արևելյան գործընկերությանը (ԱլԳ), որը համատեղ քաղաքական նախաձեռնություն է ԵՄ-ի, նրա անդամ պետությունների և վեց արևելյան հարևանների Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի միջև:

2017թ. տեղի ունեցած ԱլԳ գագաթնաժողովի ընթացքում գործընկերության երկրները վերահաստատել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի, թափանցիկության ամրապնդման և փողերի լվացման դեմ պայքարի նպատակով կայուն կառուցվածքների ստեղծմանն ու հետագա զարգացմանը նպաստելու իրենց հանձնառությունը: Գագաթնաժողովի ընթացքում ստորագրված Համատեղ հռչակագրում «ակտիվների և շահերի բախման հայտարարագրման՝ հեշտ որոնվող տվյալների շտեմարանով հագեցած արդյունավետ համակարգերը» և «ակտիվների վերականգնման և կառավարման համար իրավական շրջանակի և մեխանիզմների մշակման և ֆինանսական հետաքննությունների արդյունավետ գործիքները» սահմանվում են որպես կարևոր գերակայություններ:

Հաճախ ծառայելով որպես տարանցիկ կետեր թրաֆիքինգի և մաքսանենգության համար՝ ԱլԳ բոլոր վեց երկրները տարածաշրջանում գործող կազմակերպված հանցավոր խմբերի սպառնալիքի տակ են: Այս հանցավոր խմբերը և նրանց հանցագործություններից ստացվող ապօրինի եկամուտը փաստակարար ազդեցություն ունեն ԱլԳ տարածաշրջանի, ԵՄ-ի և ընդհանուր առմամբ Եվրոպայի զարգացման և կայունության վրա: ԵՄ-ի և ԱլԳ երկրների միջև մասնավորապես ապօրինի ձեռք բերված ակտիվների հետախուզման, սառեցման, առգրավման, բռնագրավման և վերադարձման հարցերի շուրջ ընդհանուր ռազմավարության և գործառնական արձագանքների իրականացումը պարտադիր պահանջ է:

ընդհանուր մակարդակը և որոշակի ճշտությամբ սահմանել Հայաստանում նման եկամուտներ ստեղծող ամենատարածված աղբյուրները:⁵¹

Այս իրավախախտումների համար երկրում շատ մեղադրական դատավճիռներ չեն կայացվել: Ֆինանսական հետախուզության մարմինը (ՖՀՄ) նշել է, որ գործերի մեծամասնության հիմքում ընկած հանցավոր գործունեությունը կատարվել է Հայաստանից դուրս, իսկ դրանից ստացված եկամուտը ներդրվել է հայկական բանկային համակարգում:⁵²

Փողերի լվացում

Հայաստանում փողերի լվացման պոտենցիալ սպառնալիքը գնահատվել է միջին աստիճանի, ինչը հիմնավորվում է մասամբ այն փաստով, որ երկիրը միջազգային կամ տարածաշրջանային ֆինանսական կենտրոն չէ:⁵³ Ինչևէ, այս եզրահանգումը սկզբունքորեն հիմնվում է եկամուտներ ստեղծող հանցավորության մեղադրական դատավճիռների վերլուծության վրա:⁵⁴ Ռիսկերի ազգային գնահատման (ՌԱԳ) 2014թ. հաշվետվության մեջ սահմանվող իրավախախտումներից բացի փողերի լվացման սպառնալիք են նաև կոռուպցիան և մաքսանենգությունը:⁵⁵ Ֆինանսական միջոցների զգալի մասի մուտքային և ելքային հոսքը Հայաստանում իրականացվում է բանկային ոլորտի միջոցով: Սա փողերի լվացման տեսանկյունից կազմում է հայկական մասնավոր և ֆինանսական հատվածների խոցելիության ամենամեծ մասը:⁵⁶ Անշարժ գույքի ոլորտը և խաղատները համարվում են փողերի լվացման հարաբերականորեն ավելի բարձր սպառնալիք ներկայացնող բնագավառներ ոչ բավարար վերահսկողության և կանխարգելիչ միջոցառումների կիրառման թույլ կողմերի հետևանքով:⁵⁷

Ամենավերջին ՌԱԳ հաշվետվությունը (2014թ.) ցույց է տվել, որ 2010-2013թթ. փողերի լվացման գործով կայացրած մեղադրական դատավճիռների 20%-ը իրական լվացման պոտենցիալ չի ունեցել, քանի որ հանցագործության արդյունքում չէին կարող եկամուտներ ստացվել, մինչդեռ 12%-ը ունեցել է նման պոտենցիալ, սակայն հանցագործության արդյունքում եկամուտներ չեն ստացվել, քանի որ հանցագործությունը չի ունեցել «շահադիտական» նպատակ:⁵⁸ Նույն ժամանակահատվածում այդպիսի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների ընդհանուր գումարը կազմել է մոտ 42 միլիարդ ՀՀ դրամ (106 մլն ԱՄՆ դոլար) կամ տարեկան մոտ 10.5 միլիարդ ՀՀ դրամ (26.5 մլն ԱՄՆ դոլար):⁵⁹

Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն

Հարավարևելյան Ասիայից եկող և դեպի Եվրոպայի ու Ռուսաստանի շուկաներ տեղափոխվող ապօրինի թմրամիջոցների համար Հայաստանը հիմնականում տարանցիկ երկիր է: Հայաստանի տարածքով անցնող ապօրինի թմրամիջոցների մեծ մասը գալիս է Աֆղանստանից և նախքան ցամաքային սահմանով կամ օդային փոխադրմամբ Հայաստանի տարածք մուտք գործելը անցնում է Իրանի տարածքով:⁶⁰ Հայաստանի ու Ադրբեջանի և Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանները փակ են: Այս հանգամանքը նվազեցնում է ափիոն տեսակի թմրամիջոցների շրջանառությամբ զբաղվողների համար Հայաստանի հարաբերականորեն գրավիչ լինելը: Առգրավումները իրականացվում են հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարավային սահմանի և Վրաստանի հետ հյուսիսային սահմանի միջոցով:⁶¹ Ափիոն տեսակի թմրամիջոցները Հայաստան են մտնում Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանով, մասնավորապես՝ Մեդրիի սահմանով, որից հետո մաքսանենգ ճանապարհով ներմուծվում են երկիր հիմնականում ավտոճանապարհով՝ Վրաստանի հետ սահմանով:⁶² Գրացվել են նաև Երևանի օդանավակայանում հերոինի առգրավման դեպքեր:⁶³

2018թ. հոկտեմբերին Հայաստանի վարչապետը խոստացավ արմատախիլ անել Սյունիքի մարզով իրականացվող թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը:⁶⁴ Չնայած 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում առգրավվել է թմրամիջոցների ավելի մեծ ծավալ, քան 2017թ. նույն ժամանակահատվածում, սակայն թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող բարձր օղակի հանցագործների ձեռքակալությունների մասին չի հաղորդվել:⁶⁵ 2018թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում Հայաստանի իրավապահ մարմինները գրանցել են անօրինական թմրամիջոցների ապօրինի տարածման 512 քրեական գործ:⁶⁶ 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում հերոինի առգրավման դեպքերը, ի տարբերություն 2017թ. նույն ժամանակահատվածի, աճել են ավելի քան 300%-ով, ինչը կարող էր լինել սահմանների վրա և հսկիչ անցակետերում ստուգման ավելի արդյունավետ գործելակերպեր կիրառելու կամ թմրամիջոցների դեմ պայքարի քաղաքականությունների ավելի մեծ ուշադրություն դարձնելու արդյունքում:⁶⁷ 2014թ. Հայաստանը հաղորդել էր մեկ անգամով 850 կգ հերոինի առգրավման դեպքի մասին, որը կազմում էր այդ տարվա ընթացքում երկրում առգրավված հերոինի 99%-ը:⁶⁸ Այնուամենայնիվ, հերոինի առգրավման առանձին դեպքերի քանակը ապօրինի շրջանառության պոտենցիալ ավելացման ցուցանիշ է:⁶⁹

Մարդկանց թրաֆիքինգ

2015-2020թթ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգով զբաղվողները Հայաստանում շահագործել են տեղացի և օտարերկրացի անձանց, ինչպես նաև ծագումով հայերի՝ արտասահմանում:⁷⁰ Օրինակ՝ Ռուսաստանում, Արաբական Միացյալ Էմիրություններում (ԱՄԷ) և Թուրքիայում աշխատանք փնտրող հայ ներգաղթյալներից ոմանց ստիպել են հարկադիր աշխատանք կատարել՝ հաճախ խաբեությամբ աշխատանքի ընդունելուց և աշխատանքի տեղավորման գործակալների կողմից աշխատանքի ընդունման համար չափազանց բարձր վճարներ գանձելուց հետո:⁷¹ Գյուղական շրջաններում ապրող բավարար կրթություն չունեցող տղամարդիկ և գիշերօթիկ դպրոցներում բնակվող երեխաները թրաֆիքինգի տեսանկյունից նույնպես խիստ խոցելի դիրքում են:⁷²

Հայաստանի կառավարությունը ամբողջությամբ չի ապահովում երկրում թրաֆիքինգի նվազեցմանն ուղղված նվազագույն չափանիշների կատարումը:⁷³ 2017-2018թթ. ընթացքում Հայաստանը մարդկանց թրաֆիքինգի համար որևէ դատավճռի կայացման մասին չի հաղորդել, իսկ 2014թ. ի վեր հարկադիր աշխատանքի համար կայացրած դատավճիռ չի ունեցել: Կառավարությունը ութը զոհի է նույնացրել ամենափոքր թիվը 2012թ. ի վեր: Ավելին, Հայաստանում թրաֆիքինգի զոհերը փակել են իրենց մուտքը արդարադատության համակարգ:⁷⁴ Այս պատճառներով ԱՄՆ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին 2020թ. զեկույցում Հայաստանը հայտնվել է խումբ 2-ի վերահսկման ցուցակում:⁷⁵ Այդուհանդերձ, համարվում է, որ Հայաստանը առաջընթաց է գրանցել կատարելով օրենսդրական փոփոխություններ և ապահովելով ուսուցում իրավապահ մարմինների աշխատակիցների համար:⁷⁶ 2018թ. իրավասու մարմինները ավելի մեծ թվով հետաքննություններ և քրեական հետապնդումներ են իրականացրել:⁷⁷ Այս զեկույցը կազմելու պահին Հայաստանի քաղաքացիների թրաֆիքինգի արդյունքում ստացված ապօրինի ֆինանսական հոսքերի ծավալը հայտնի չէր:

Ահաբեկչության ֆինանսավորում

Հայաստանի 2014թ. ՌԱԳ-ի եզրահանգմամբ՝ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը շատ ցածր է:⁷⁸ Թեև Հայաստանը համատեղ սահման ունի Իրանի հետ, ինչը ըստ ՖԱԹՖ-ի ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկ է ներկայացնում, չկան կոնկրետ ցուցիչներ այն բանի, որ Հայաստանի մասնավոր հատվածը և հասարակական կազմակերպությունները օգտագործվել են այս նպատակներով:⁷⁹ Ահաբեկչության ֆինանսավորման համար հետաքննությունների, քրեական հետապնդումների և դատավճիռների մասին չի հաղորդվել, և ըստ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի (ՄԱԿ

ԱևԲ)՝ Հայաստանում ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցների սառեցում չի եղել:⁸⁰

Կոռուպցիա

Կոռուպցիան բացասական ազդեցություն ունի որևէ երկրի զարգացման, պետական ռեսուրսների բաշխման և ժողովրդավարության ամրապնդման վրա: Հայաստանը մեկն է այն զարգացող երկրներից, որտեղ կոռուպցիայի խնդիրը դեռ գերակայում է և բացասաբար է անդրադառնում տնտեսության բոլոր ոլորտների, ինչպես նաև կառավարության, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմինների, հարկային և մաքսային ծառայությունների աշխատանքի վրա:⁸¹ Ըստ հաղորդվող տվյալների՝ կոռուպցիան Հայաստանի քաղաքականության բնութագրիչ հատկանիշներից մեկն է, որը նկարագրվում է որպես օլիգարխների, քաղաքական գործիչների և բարձրաստիճան պաշտոնյաների միջև սերտ հարաբերությունների արդյունք:⁸² և բնութագրվում է պատվիրատուների ուժեղ հովանավորչական ցանցերով, ինչպես նաև բիզնեսի և պետական հաստատությունների միջև տարանջատման բացակայությամբ:⁸³ Այս բոլորը խաթարում են հակակոռուպցիոն միջոցառումների հաջողությամբ իրականացումը և պետական կառավարման թափանցիկության մեծացման ընդհանուր անհրաժեշտությունը:⁸⁴

Կոռուպցիան և հանրային ընկալումը

Հարցումները ցույց են տալիս, որ կոռուպցիան Հայաստանում շարունակում է փսալ որպես շատ լուրջ խնդիր և տարածված է,⁸⁵ ինչը հակասում է Հայաստանի ՌԱԳ-ին, որը երկրի խոցելիությունը գնահատում է միջին մակարդակում:⁸⁶ Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման 2019 թվականի համաթիվը (ԿԸՀ) Հայաստանին տվել է 42 միավոր՝ 100 միավորից, որը ավելի բարձր ցուցանիշ է և նշանակում է կոռուպցիայի ավելի ցածր մակարդակ: Այս արժեքով երկիրը 199 երկրների շարքում զբաղեցնում է 77-րդ տեղը:⁸⁷ Թեև այս արժեքը 2012թ. ի վեր ամենաբարձրն էր, սակայն այն շարունակում է ցույց տալ, որ Հայաստանը կոռուպցիայի զգալի մակարդակ ունեցող երկիր է:⁸⁸

Հայաստանում կոռուպցիան դիտվում էր որպես հիմնական դրդապատճառ այն զանգվածային բողոքի ակցիաների, որոնք 2018թ. ի վերջո վերածվեցին Թավշյա հեղափոխության և հանգեցրին իշխանափոխության: Հակակոռուպցիոն նախկին քաղաքականությունները համապարփակ չէին և առնվազն թերի էին իրականացվում:⁸⁹ Չնայած Հայաստանի նոր կառավարությունը կոռուպցիան արմատախիլ անելու

ջանքեր է գործադրել,⁹⁰ սակայն դեռևս անարդյունավետ է աշխատում իրավական համակարգում անհրաժեշտ փոփոխությունների և դրանց իրական իրականացման առումով:⁹¹

Խարդախության համար հարուցված քրեական գործ

Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ) 2016թ. իրականացրած հետաքննությամբ Հայաստանում հայտնաբերվեց չհարկապահ կողմից կատարված խարդախություն ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում: ԽՊԵԳ-ը բացահայտեց մի սխեմա, որով չհարկապահությամբ ավելի քան 300 հազար եվրո էին գրպանել ծրագրերի իրականացման

համար հատկացված ԵՄ դրամական միջոցներից, թեև այդ ծրագրերը երբևէ չէին իրականացվել: դուրս էին գրվել միայն կեղծ հաշիվ-ապրանքագրեր՝ կեղծ մասնակիցների ցուցակի հիման վրա: ԽՊԵԳ-ն առաջարկեց յուրացված գումարները վերադարձնել Եվրոպական հանձնաժողովի Հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով իրավասու տնօրինությանը (ԵՀԲԸԲ):⁹² Ի վերջո, Հայաստանի դատական մարմինների կողմից իրականացված ամբողջական հետաքննության ընթացքում բերման ենթարկվեց 11 անձ:

Կառավարությունը հիմնականում որպես առաջնահերթություն դիտարկել է խոշոր կոռուպցիայի դեմ պայքարը, սակայն այն պետք է մշակի համակարգային կոռուպցիան վերացնելու հստակ ռազմավարություններ և մեխանիզմներ: Կառավարության 2018թ. հրապարակած նոր 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը քննադատության արժանացավ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, քանի որ կազմվել էր անփութ և ոչ թափանցիկ ձևով:⁹³ 2019թ. հունվարին կառավարությունը երկարաձգեց քաղաքացիական հասարակությունից կարծիքներ հավաքելու ժամկետը:⁹⁴

Կոռուպցիայի և պետական միջոցների յուրացման համար հարուցված բազմաթիվ ադմոնկ հանած գործերով մեղադրանքներ առաջադրվեցին: 2018թ. մայիս-նոյեմբեր ամսինների ընթացքում ձեռնարկված հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքում վերականգնվեց և պետական բյուջե վերադարձվեց 10.5 միլիոն ՀՀ դրամ (19 միլիոն եվրո):

Առաջին անգամ Հայաստանի կառավարությունը

քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ուղղակիորեն ներգրավեց իր հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների չորրորդ ծրագրի կազմման աշխատանքներում: Ռազմավարությունը, որն ունի կոռուպցիայի դեմ պայքարի երեք ուղղություն (կոռուպցիայի կանխարգելումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը, հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը) լավ հիմք է կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու համար: Սակայն քաղաքական ազդեցությունը, անձեռնմխելիության մշտադիտարկման և ռեսուրսների բացակայությունը և ակտիվների վերադարձման թերի իրավական մեխանիզմները Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարին խոչընդոտող հիմնախնդիրների թվում են, որոնք դեռևս առկա են:

Աղբյուր՝ Հայաստանի Իրավաբանների ասոցիացիա և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա: «ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի Գլուխ II-ի (Կանխարգելում) և Գլուխ V-ի (Ակտիվների վերականգնում) իրականացման վերաբերյալ» այլընտրանքային զեկույց: 2020թ., <https://uncaccoalition.org/new-civil-society-report-on-armenia-better-monitoring-and-a-more-robust-asset-recovery-framework-needed-to-advance-anti-corruption-efforts/?fbclid=IwAR35xUaWLFfKU3EqrY9AgkPZryo-ejopih0SpPZ-4FnN25PPftkekdLRohs>

3. Ապօրինի ֆինանսական հոսքերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը Հայաստանում



ԱՖՅ-երի դեմ պայքարն առնչվում է ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ուղղությունների, և անհրաժեշտ են տարբեր ոլորտի փորձագետներ՝ մշակելու տարբեր քաղաքականություններ և դրանց իրականացման միջոցառումներ և իրականացնելու դրանք ոչ միայն քրեական արդարադատության ոլորտում, այլև կառավարության տարբեր մակարդակներում: Թափանցիկությունը կարևոր է նաև առևտրային ընկերություններում, և պետք է ձեռնարկվեն քայլեր՝ խթանելու պետական հատվածի անբասիրությունը և սատարելու ապօրինաբար ձեռք բերված ակտիվների առգրավմանը, բռնագրավմանը և վերականգնմանը մեծ ուշադրություն դարձնելուն (պատժամիջոց ներառող կամ առանց պատժամիջոցի մեխանիզմներով): Ավելին, վերադարձված ակտիվները զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարման ուղղելը կարևոր է ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման համար: Կայուն զարգացման քաղաքականությանը հետևողական լինելը և միջգերատեսչական ու միջազգային համագործակցությունը միասին կօգնեն կրճատել ապօրինի ֆինանսական հոսքերը: ԱՖՅ-երի կրճատման անհրաժեշտությունը զարգացման քաղաքականության միջազգային օրակարգի կարևոր կետերից է: ԱՖՅ-երը զսպելու նպատակը սերտորեն կապված է 2015թ. հաջորդած օրակարգի հետ, քանի որ վերջինս ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակներում (ԿԶՆ)՝ որպես ԿԶՆ 16.4 կետը. «Մինչև 2030թ. զգալիորեն կրճատել ֆինանսների և զենքերի ապօրինի հոսքերը, ուժեղացնել գողացված գույքը հետ վերցնելու և վերադարձնելու գործողությունները և պայքարել կազմակերպված հանցավորության բոլոր ձևերի դեմ»:

3.1 Հայաստանի իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը

Իրավական համակարգը

ԱՖՅ-երի դեմ պայքարի միջոցառումների և եկամուտ ստեղծող այլ հանցավոր գործողությունների դեմ պայքարի միջոցառումների միջև շատ ամուր կապ կա, թեև ԱՖՅ-երի դեմ պայքարը, պարզ քրեաիրավական միջոցառումներից բացի, իրավական շրջանակ է պահանջում: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ ԱՖՅ-երը և եկամուտ ստեղծող հանցագործությունները կարող են որոշակի փոխկապվածություն ունենալ և հետևաբար՝ միասին աճել և նվազել: Հայաստանի կառավարությունը աշխատում

է թմրամիջոցների մաքսանենգության, ստվերային տնտեսության, արտասահմանից ստացվող դրամական փոխանցումների զգալի ներհոսքի, անշարժ գույքի ոլորտում գույքը թաքցնելու և կանխիկը լայնորեն օգտագործելու (որը համարվում է, որ երկրում որոշակի ավանդույթային իրականություններ է արտացոլում) արդյունքում ստեղծվող խոցելիությունները վերացնելու և դրա շնորհիվ երկրում ԱՖՅ-երի ծավալը կրճատելու ուղղությամբ:⁹⁵ 2014թ. ՌԱԳ-ում սահմանված ռիսկերը նվազեցնելու նպատակով կառավարությունը հաստատել է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ազգային ռազմավարությունը:⁹⁶

Հայաստանում կազմակերպված հանցավորության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի հիմքում իրավական համակարգն է, որը կազմում են Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, օրենքները և այլ իրավական ակտերը, և որը ներառում է նաև Քրեական օրենսգիրքը, Քրեական դատավարության օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Մաքսային օրենսգիրքը, ինչպես նաև այս հանցագործությունների դեմ պայքարում ներգրավված պետական մարմինների, կազմակերպությունների և ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերը:⁹⁷

- Քրեական օրենսգրքի (ՔՕ) 190-րդ հոդվածը⁹⁸ քրեականացնում է փողերի լվացումը և քողարկումը: Փողերի լվացման հանցագործությունները պատժելի են՝ անկախ փողերի լվացմանը նախորդող արարքի կատարման վայրից, չնայած պատժելիությունը արտասահմանում կատարված արարքների վրա առանձին չի տարածվում:⁹⁹
- Սեփական եկամուտների լվացումը (քողարկումը) նույնպես քրեականացվում է: Հայաստանի Քրեական օրենսգիրքը քրեականացնում է նաև խոշոր չափերով յուրացումը (հոդված 179):¹⁰⁰ Մասնավոր հատվածում գույքի հափշտակումը քրեականացվում է ՔՕ 179-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների մասին օրենքի 53-րդ հոդվածով և համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարելու դեպքում՝ ՔՕ 181-րդ հոդվածով:¹⁰¹
- ՔՕ 55-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է հանցագործության արդյունքում ստացված եկամուտների և փողերի լվացման ու դրան նախորդող արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների պարտադիր բռնագրավում:¹⁰² Սակայն այս հոդվածը կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե առկա է փողերի լվացման մեղադրական դատավճիռ:

- Մեղադրական դատավճռի բացակայության դեպքում կիրառելի է միայն ՔՕ 55-րդ հոդվածի 3-րդ մասը, որը ավելի նեղ է սահմանված, քանի որ տարածվում է ծանր և առանձնապես ծանր հանցանքների վրա՝ սահմանափակելով եկամուտ ստեղծող տարբեր հանցանքների արդյունքում ստացված գույքի առգրավումը և բռնագրավումը արդյունավետ կերպով իրականացնելու պետության կարողությունը:

Հետախուզման, ստեղծման և առգրավման միջոցառումները կարող են իրականացվել Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) համաձայն: Հայաստանը, ցավոք, դեռևս չունի Ակտիֆների վերականգնման գրասենյակ (ARO), որը թույլ կտա արդյունավետորեն որոնել և կառավարել կազմակերպված հանցավոր գործունեության, ինչպես նաև կոռուպցիայի հետ կապված ակտիֆները:

Բռնագրավված գույքը փոխանցվում է պետական բյուջե. այս զեկույցը կազմելու պահին չկար տեղեկատվություն այն մասին, թե իրականում ինչպես են բաշխվում վերադարձված եկամուտները, օրինակ, արդյոք ուղղվում են զարգացման խիստ առաջնահերթ կարիքներին, ինչպիսիք են առողջապահության կամ կրթության ոլորտներում առկա կարիքները:¹⁰³ Առգրավված գույքը պահվում է ՔԴՕ 236-րդ հոդվածով սահմանված կարգով:¹⁰⁴

- ՔՕ 55-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են գույքի ամբողջական կամ մասնակի բռնագրավումը: Բանկային գաղտնիքը կարգավորվում է Բանկային գաղտնիքի մասին օրենքով (ԲԳՕ), ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով, Քրեական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ) և Օպերատիվ հետախուզական գործունեության մասին 2007թ. օրենքով (ՕՀԳՕ):¹⁰⁵ Նախքան քրեական գործ հարուցելը իրավապահ մարմինները ՕՀԳՕ 29-րդ հոդվածով սահմանված կարգով կարող են ստանալ ֆինանսական, այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ:¹⁰⁶

Ինստիտուցիոնալ համակարգը

Հետևյալ հաստատությունները այն հիմնական մարմիններն ու հաստատություններն են, որոնք ներգրավված են երկրում կազմակերպված հանցավորության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում.

- ՀՀ Կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ). անկախ մարմին, որը պատասխանատու է երկրում բոլոր թղթադրամների ու մետաղադրամների թողարկման, բանկային ոլորտի վերահսկման ու կարգավորման և պետական արժույթային պահուստների պահպանման համար: Այն իրականացնում է Հայաստանի բոլոր ֆինանսական

հաստատությունների՝ ներառյալ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, դրամական փոխանցման ծառայությունների, արտարժույթի փոխանակման կետերի և գրավատների գործունեության լիցենզավորման, կանոնակարգման և վերահսկման գործառնություններ: Այն ունի ֆինանսական հաստատությունների դեմ սանկցիաներ կիրառելու համապատասխան ընթացակարգեր և բոլոր տեսակի ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառում է շտկիչ միջոցառումներ:¹⁰⁷

- Ֆինանսական դիտարկումների կենտրոն (ՖԴԿ). ՀՀ Կենտրոնական բանկի ստորաբաժանում, որը ստեղծվելով 2005թ. գործում է որպես ֆինանսական հետախուզության ազգային մարմին (ՖՀՄ) և հանդես է գալիս որպես միջնորդ հաշվետու անձանց և իրավապահ մարմինների միջև: ՖԴԿ-ի առաքելությունը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարն է՝ այդ նպատակով տեղեկություններ հավաքագրելու, դրանք վերլուծելու և փոխանակելու միջոցով: ՖԴԿ-ն նաև ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային կազմակերպություններում և կառույցներում՝ ակտիվորեն մասնակցելով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային նախաձեռնություններին:¹⁰⁸
- ՀՀ դատախազություն. իրավապահ մարմինների՝ ՀՀ Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության միջոցով իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:¹⁰⁹
- Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱՄ). մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունները ազգային անվտանգության ոլորտում և իրականացնում է ազգային անվտանգության մարմինների կառավարումը:¹¹⁰
- Արդարադատության նախարարություն (ՀՀ ԱՆ). ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համատեքստում ունի երկու լիազորություն, մասնավորապես իրավական փոխօգնության համար պատասխանատու իրավասու մարմնի և նոտարների ու հասարակական կազմակերպությունների վերահսկողություն (միայն դատարան ներկայացված քրեական գործերի դատավարության իրականացման առնչությամբ):¹¹¹
- Ֆինանսների նախարարություն (ՀՀ ՖՆ). գործադիր մարմին, որը մշակում և իրականացնում է կառավարության քաղաքականությունները բյուջետային եկամուտների հավաքագրման և հանրային ֆինանսների կառավարման բնագավառներում: Լինելով

նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տարբեր տեսակների և մասնագիտությունների (ՆՈՖԳՏՄ), օրինակ, լիցենզավորված աուդիտորներ, խաղատներ, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպիչներ, վերահսկիչ մարմինը, ՀՀ ՖՆ-ն սպահովում է այս ՆՈՖԳՏՄ-ների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կատարումը:¹¹²

3.2 Հայաստանում իրականացվող միջոցառումների համապատասխանությունը միջազգային միջոցառումներին և հանձնարարականներին

Հայաստանում արձանագրվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համաշխարհային ստանդարտների կատարման առաջընթաց: 2009թ. ի վեր Հայաստանը էական բարելավումներ է կատարել ՖԱԹՖ-ի հանձնարարականները կատարելու առնչությամբ:¹¹³ Փողերի լվացումը դիտվում է որպես հանցանք, սահմանվել է բռնագրավման ռեժիմը, ահաբեկչության ֆինանսավորումը դիտվում է որպես հանցանք, սահմանվել են ահաբեկիչների գույքի սառեցման մեխանիզմներ, կանխարգելիչ միջոցառումներ և ինստիտուցիոնալ միջոցառումներ, ֆինանսական դիտարկողի իսկառությունները:¹¹⁴ Անհրաժեշտ է որոշ չափով բարելավել փողերի լվացման ռիսկի սահմանումը, գնահատումը և ընկալումը, թեև Հայաստանը զգալի ջանքեր է գործադրել ռիսկերի ազգային գնահատում (ՌԱԳ) կատարելու համար:¹¹⁵

2013թ. Հայաստանում հաստատվել է ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման նոր ուղեցույց, որը հետևում է միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են ՖԱԹՖ-ը, ՏՀԶԿ-ն և Համաշխարհային բանկը, հանձնարարականներին և միջոցառումներին:¹¹⁶ 2018թ. Եվրոպայի Խորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների գնահատման փորձագետների հանձնախումբը (ՄԱՆԻՎԱԼ) որոշեց, որ Հայաստանը կփաս կանոնավոր հսկողության տակ և կշարունակի հաղորդել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումների իրականացումն ուժեղացնելու ուղղությամբ հետագա առաջընթացի մասին:¹¹⁷

Հայաստանի հիմնական առաջընթացը

Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել իր ՓԼ/ԱՖ ռիսկերի սահմանման, գնահատման և ընկալման գործում՝ իրականացնելով ռիսկերի ռազմավարական և ոլորտային վերլուծություններ 2010թ. և 2013թ. և ռիսկերի լայնամասշտաբ ազգային գնահատում 2014թ.:¹¹⁸ 2017թ. իրականացվել է միջոցառումների ծրագիր՝ ՌԱԳ-ում սահմանված ռիսկերը վերացնելու համար: Այդուհանդերձ, Հայաստանի փողերի լվացման ռիսկերի գնահատման մեջ հայտնաբերվել են մի շարք բացեր, որոնք մասնավորապես իրավախախտման արարքների վերաբերյալ որոշակի առանցքային տվյալների և տեղեկությունների պակասի արդյունք են: Դրա համար դեռևս անհրաժեշտ են զգալի բարելավումներ ռիսկերի ընկալման հարցում, ինչն ազդում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունների և միջոցառումների մշակման և կարևորման վրա:¹¹⁹

3.3 Հայաստանի ներուժը կազմակերպված հանցավոր գործունեության, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ակտիվների սառեցման, առգրավման, բռնագրավման և վերականգնման գործում

Հայաստանի պետական մարմինները ձգտում են առգրավել և բռնագրավել քրեական հանցանքների, մասնավորապես փողերի լվացման հետ կապված ակտիվները: 2010-2014թթ. պետական մարմինները ՖԴԿ-ի մակարդակով իրականացվող ֆինանսական հետախուզման միջոցով կասեցրել և առգրավել են դրամական միջոցներ: Այդ ժամանակահատվածում իրավապահ մարմինները կասեցրել և առգրավել են շուրջ 647 603 եվրո:¹²⁰

Սակայն ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետների հանձնախումբը գտել է, որ այս մեխանիզմը գործնականում բավարար չէ,

քանի որ Հայաստանի հարկային մարմինը չի դիմել այս մեթոդին այն հաճախականությամբ, որքան անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով այն, թե հարկային հանցանքները Հայաստանում ինչ էական սպառնալիք են ներկայացնում:¹²¹ Իրավապահ մարմինների նշած հիմնական պատճառներից են բարդ օրենսդրական դրույթները, որոնք իրենց հերթին արգելում են անհրաժեշտ ֆինանսական ապացույցների ստացումը:¹²² Ավելին, եկամուտներ ստեղծող խոշոր հանցագործությունների ուղղությամբ պրոակտիվ ֆինանսական հետաքննություններ իրականացնելու մշակույթի բացակայությունը չի նպաստում, որ ԱՖՇ-երի նույնացման, հետախուզման և կանխարգելման նպատակով իրականացվի արդյունավետ ֆինանսական հետախուզում:¹²³

Ակտիվների վերականգնման հիմնասխնայի միայն բոլորովին վերջերս՝ 2018թ. է ընդգրկվել Հայաստանի քաղաքական օրակարգում և շատ դանդաղ առաջընթաց ունի: Արդյունքում ակտիվների վերականգնման իրավական շրջանակը, չնայած վերջին շրջանում իրականացված օրենսդրական

բարեփոխումներին, շարունակում է լինել բարդ և ոչ լիարժեք: Սա ընդգծում է Ակտիվների վերականգնման գրասենյակի ստեղծման անհրաժեշտությունը, որը պետք է ստեղծվի ներկայիս համակարգի հիման վրա և իր լիազորությունները արդյունավետորեն իրականացնելու համար ունենա համապատասխան աշխատակազմ և այլ ռեսուրսներ:

Ադրյուր՝ Հայաստանի Իրավաբանների ասոցիացիա և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա: «ՄՄԿ-ի Գոռուպցիայի դեմ կոնվենցիայի Գլուխ II-ի (Գանխարգելում) և Գլուխ V-ի (Ակտիվների վերականգնում) իրականացման վերաբերյալ» այլընտրանքային զեկույց: 2020թ., <https://uncaccoalition.org/new-civil-society-report-on-armenia-better-monitoring-and-a-more-robust-asset-recovery-framework-needed-to-advance-anti-corruption-efforts/?fbclid=IwAR35xUaWLFfKU3EqrY9AgkPZryo-ejopih0SpPZ-4FnN25PPftkekdLRohs>

4. Ապօրինի ֆինանսական հոսքերի ազդեցությունը և արժեքը Հայաստանում



4.1 Ապօրինի ֆինանսական հոսքերի պատճառած փասսի գնահատումը

ԱՖՀ-երը բացասաբար են անդրադառնում երկրի տնտեսական և սոցիալական զարգացման վրա բազմաթիվ ձևերով: Կապիտալի չփաստաթղթավորված փախուստները որևէ երկրից և դեպի այդ երկիր (ինչպես նաև երկրի ներսում) լուրջ հետևանքներ են ունենում պետական եկամուտների վրա. կապիտալ, որը հակառակ դեպքում կարող էր օգտագործվել պետական ծախսերի և տնտեսական բարեփոխումների այլ ձևերի մեջ: Ինչևէ, ԱՖՀ-երի պատճառած փասսը ավելին է, քան զուտ պետական եկամուտների կորուստը: ՏՀԶԿ-ի գնահատումը ԱՖՀ-երը երկրի վրա կարող են ազդել տարբեր տեսակի, այդ թվում՝ տնտեսական, սոցիալական, կառավարման, ֆիզիկական և բնապահպանական փասսներ հասցնելով:¹²⁴

ԱՖՀ-երը և կազմակերպված հանցագործությունները խաթարում են պետական պաշտոնյաների, հաստատությունների և օրենքի գերակայության հանդեպ վստահությունը: Վստահության, քաղաքացիական հասարակության ներգրավվածության և սոցիալական կապիտալի ցածր մակարդակները կարող են արգելք հանդիսանալ զարգացման համար և էլ ավելի օգնել հանցավոր խմբավորումներին:¹²⁵ Սա ստեղծում է փասսակար շղթա, որը մեծացնում է քաղաքական անկայունությունը և թուլացնում է պետական կառավարումը: Կոռուպցիայի արժեքը զարգացող երկրների համար նույնպես ահռելի է: Համաշխարհային տնտեսական ֆորումի հաշվարկներով զարգացող երկրներում կոռուպցիայի արժեքը կազմում է տարեկան 1.26 տրիլիոն ԱՄՆ դոլար:¹²⁶

Ինչ կարելի էր անել 1.26 տրիլիոն ԱՄՆ դոլարով

Կոռուպցիայի զգալի արժեքը ցույց տալու համար՝ 1.26 տրիլիոն ԱՄՆ դոլարը բավարար գումար է օրական 1.25 ԱՄՆ դոլարից պակաս գումարով ապրող 1.4 միլիարդ մարդու աղքատությունից հանելու և առնվազն վեց տարի աղքատության շեմից բարձր պահելու համար: Բացի այդ, 2020թ. մարտին ՄԱԱԶԽ-ն առաջարկեց ԱՄՀ-ի փախուցված 1 տրիլիոն ԱՄՆ դոլարի շրջանառու կապիտալ ներարկել օգնելու զարգացող երկրներին հաղթահարել COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամը: Գումարը տրամադրվելու էր ծայրահեղ անհրաժեշտության առողջապահական ծառայությունների մատուցման և սոցիալական օգնության ծրագրերի համար:

Կոռուպցիան ոչ միայն ուղղակիորեն ԱՖՀ-եր է ստեղծում (օր. բանկային խարդախություն, միջոցների յուրացում), այլ ստեղծում է նաև միջավայր, որում կարող է բարգավաճել կազմակերպված հանցավոր գործունեությունը. այս երկուսը լրացնում են միմյանց:¹²⁷ Կազմակերպված հանցավոր խմբերը օգտվում են պետական պաշտոնյաների կոռուպցիայի նկատմամբ ունեցած խոցելիությունից և հաճախ ստանում են օգուտներ ու ազդեցություն քաղաքական իշխանության վրա:¹²⁸ Սա ստեղծում է մի միջավայր, որում կազմակերպված հանցագործները շահում են կոռուպցիայից՝ նպաստելով հանցավորության և կոռուպցիայի խորացմանն ու ամրապնդմանը: Կոռուպցիան կարող է նաև թուլացնել դատախարակական հետևանքների սպառնալիքը հանցավոր գործունեության համար՝ մեղմացնելով իրավական համակարգի ցանկացած տեսակի իրական զսպիչ ազդեցություն:

Տնտեսությանը հասցվող փասսը

- Ուղղակի ձևով ԱՖՀ-երը տնտեսությունից հանում են ֆինանսական միջոցները, ինչը կարող է ստիպել պետությանը ռեսուրսներն ուղղել այլ հանցավոր գործունեությունը կանխարգելելու և դրան անձազանքելու կամ զոհերին օգնություն ցուցաբերելու և փոխհատուցում տրամադրելու ուղղությամբ: Անուղղակի ձևով ԱՖՀ-երը բացասաբար են ազդում տնտեսության ընդհանուր վիճակի, մրցակցության, ներդրումների և ձեռներեցության վրա:¹²⁹
- ԱՖՀ-երի պատճառած ռեսուրսների և հարկային եկամուտների արտահոսքը զգալի ազդեցություններ է ունենում բյուջեի վրա և մեծացնում է պակասուրդը: Ֆինանսական ռեսուրսների կորուստը թույլ չի տալիս ընդլայնել հիմնական սոցիալական և ենթակառուցվածքային ծրագրերը, որոնք կարող են բարելավել բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ բնակչության ամենախոցելի շերտի շատ աղքատների բարեկեցությունը և հնարավորություններ ստեղծել նրանց համար:¹³⁰
- ԱՖՀ-երը նաև թուլացնում են ֆինանսական համակարգերը և թույլ են տալիս անհատներին թաքցնել գողացված ակտիվները, խուսափել հարկերից և փողի արժեզրկման անցանկալի ազդեցություններից: Բնակչությանը և տեղական տնտեսությանը օգուտ տալու փոխարեն փողը կարող է հայտնվել օֆշորային հարկային օազիսում:¹³¹ Որոշ դեպքերում սա անում է այն փոքրաթիվ մարդիկ, որոնք երկար ժամանակ քաղաքական իշխանություն և ազդեցություն են ունեցել բնակչության լայն զանգվածի վրա, և որոնք տեղական տնտեսությունը զարգացնելու և սոցիալական

ծառայություններն ընդլայնելու քիչ խթաններ ունեն (կամ չունեն):¹³²

- 2000-2010 թթ. իրականացված 39 երկրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս երկրների տնտեսական աճը կարող էր մոտ երեք տոկոսով ավելին լինել, եթե ԱՖՀ-երը արմատախիլ արվեին:¹³³
- ԱՖՀ-երը նպաստում են աղքատության ավելացմանը և ազդում են ընդհանուր կենսամակարդակի վրա: Օրինակ՝ կապիտալի «փախուստի» հետևանքով ենթասահարական Աֆրիկայում մեկ շնչի հաշվով եկամուտը 1.5 տոկոսով ցածր էր միջինից:¹³⁴
- Ֆինանսավորելով ընդհատակյա և զուգահեռ տնտեսությունները՝ ԱՖՀ-երն ազդում են երկրի տնտեսության վրա,¹³⁵ ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում է երկրի օրինական տնտեսության կայունության, հուսալիության և մրցունակության վրա:

Հասարակությանը և պետական կառավարմանը հասցվող զրգար

- Հասարակությանը հասցվող զրգար ստեղծում է լարվածություններ հասարակության շրջանում կամ խորացնում է դրանք, ինչպես նաև ստեղծում կամ մեծացնում է տնտեսական և սոցիալական մեկուսացումը:¹³⁶ ԱՖՀ-երը կարող են ազդել հասարակությունների վրա՝ դրդելով խոցելի խմբերի մարդկանց մասնակցել կազմակերպված հանցավոր գործունեությանը կամ դառնալ այդ հանցագործների գոհր: ՄԱԿ-ի Մարդկային ներուժի զարգացման զեկույցը նախագուշակում է, որ ԱՖՀ-երը արգելք են հանդիսանում մարդկային զարգացման համար, քանի որ «թուլացնում են կառավարումը և կրճատում են սպառումը, ներդրումները և սոցիալական ծախսերը, զրգար են հասցնում կոլեկտիվ կարողությունների երկարաժամկետ կառուցմանը և մարդկային զարգացման ընդլայնմանը»:¹³⁷ Այս պատճառով ԱՖՀ-երի դեմ պայքարը կարող է կարևոր նշանակություն ունենալ հասարակության և զարգացման կարիքների բավարարման գործում:¹³⁸
- ԱՖՀ-երը հասարակությանը զրգար են հասցնում նաև նրանով, որ խաթարում են պետական հաստատությունների աշխատանքը և այդպիսով նվազեցնում են հանրության վստահությունը պետական մարմինների նկատմամբ: Դրան անվանում են նաև «կառուցվածքային / կառավարման զրգար»:¹³⁹ Կառավարության հեղինակությանը զրգար է հասցվում, երբ որևէ օրենք է խախտվում, և կառավարությունը, կարծես, չի կարողանում արդյունավետ կերպով

արձագանքել նման հանցավորությանը:¹⁴⁰

- Կառուցվածքային և կառավարման զրգար կոռուպցիայի, կազմակերպված հանցավորության, ԱՖՀ-երի և անպատժելիության արդյունքում կառավարման որակին և «հասարակական պայմանագրին», օրենքի գերակայությանը և զարգացման գործընթացին հասցված զրգարն է:¹⁴¹
- Այս տեսակի զրգար խոչընդոտ է հանդիսանում, օրինակ, ԿԶՆ 16-րդ նպատակի իրագործման համար, այն է՝ խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման և բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, ինչպես նաև բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ:¹⁴² Մեծածավալ ԱՖՀ-երը և կոռուպցիայի բարձր մակարդակը միասին կարող են թուլացնել հասարակությանը ծառայությունների մատուցումը և ֆինանսական միջոցները շեղել ՀՀ կառավարության ծրագրերից՝ ներառյալ առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերիցը: Նույն կերպ, ելնելով կազմակերպված հանցագործությունները վերահսկելու նպատակով անվտանգության ապահովման առաջնահերթ միջոցառումների, օրինակ իրավապահպանության և սահմանային հսկողության ուղղությամբ կատարվող ծախսերի ավելացման անհրաժեշտությունից, պետության սահմանափակ ռեսուրսները կարող են չներդրվել սոցիալական ծառայություններում, օրինակ, առողջապահության և կրթության ոլորտներում:¹⁴³
- Քաղաքացիական հասարակությունը տնտեսական և քաղաքական գործիչների հետ միասին կարևոր դերակատարում ունի օրենքի գերակայությունը հաստատելու և այն պահպանելու գործում: Ուժեղ և կարողունակ պետական հաստատությունները և քաղաքացիական հասարակությունը հակազդում են շատ անօրինական գործողությունների և կանխում են ԱՖՀ-երի աճը: Օրինակ թափանցիկ հարկային համակարգը և պետական ծախսերի արդյունավետ կառավարումը կարող են նպաստել հարկերից չխուսափելուն, մինչդեռ կառավարության ներսում անբարիքության և հաշվետվողականության կայացած մշակույթը, քրեական և էթիկական խախտումների համար իրական պատժամիջոցների կիրառման հետ միասին, էական է՝ կանխելու և կառավարելու շահերի բախման պոտենցիալ իրավիճակները և կարող է կոռուպցիայի ուժեղ կանխարգելիչ միջոց լինել:¹⁴⁴

Ֆիզիկական զրգար

- ԱՖՀ-երը խաթարում են նաև մարդկանց ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը:¹⁴⁵ ԱՖՀ-երը

և կազմակերպված հանցավորությունը բացասական ազդեցություն են ունենում, օրինակ, Հայաստանում ԿԶՆ 3-րդ նպատակի («Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից»)՝¹⁴⁶ իրագործման վրա մի շարք ձևերով, որոնք բոլորովին էլ վերացական չեն և ներառում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետևանքով թմրամիջոցների օգտագործման ծավալների ավելացումը կամ բռնության կիրառումը կամ սպառնալիքը:¹⁴⁷

4.2 Հայաստանի համար և Հայաստանում ԱՖՀ-երի ուղղակի արժեքի հաշվարկները

ԱՖՀ-երը, ելնելով իրենց բնույթից, սովորաբար քողարկվում են: Այդ պատճառով ապօրինի հոսքերի չափումները կարող են իրականացվել միայն անուղղակի կերպով՝ օգտագործելով համապատասխան տվյալներ, որոնք չեն ապահովում նման չափման ճշգրտությունը: Բացի այդ, ապօրինի հոսքերի բազմաթիվ ձևեր կան, որոնք հնարավոր չէ հայտնաբերել առկա տնտեսական տվյալների և մեթոդների օգտագործմամբ (օր. կանխիկ գործարքները):¹⁴⁸ Այդ պատճառներով այստեղ ներկայացված հաշվարկները, ամենայն հավանականությամբ, համեստ են: Ինչպես, դրանք, այնուամենայնիվ, տրամադրում են հիմնականում չլիտարկվող ԱՖՀ-երի խնդրի մեկ չափում: Ավելին, այս դինամիկայի նույնիսկ համեստ հաշվարկը ցույց է տալիս զգալի ազդեցություն Հայաստանի հասարակության վրա:

ԱՖՀ-երի վերաբերյալ հաշվարկները զարգացող երկրներում զգալիորեն տարբերվում են, ու թեև Միավորված ազգերի կազմակերպությունը տարբեր անդրազգային հանցավոր գործողություններից ստացված եկամուտները հաշվարկելու աշխատանք է իրականացրել, այնուամենայնիվ, կա տեղեկատվության զգալի պակաս, այդ թվում՝ միջազգային ֆինանսական համակարգով այդ եկամուտների հոսքի ծավալի վերաբերյալ:¹⁴⁹ Սակայն հաշվի առնելով հարցի խիստ կարևորությունը Հայաստանի բնակչության ապագայի համար՝ ԱՖՀ-երի կոլեկտիվ նշանակության մասին ցանկացած մատնանշում կարող է օգտակար լինել երկրում քաղաքականություն մշակողներին, քաղաքացիներին և այլ շահագրգիռ կողմերին ուղղորդելու համար:

Զարգացող երկրներում ԱՖՀ-երի ընդհանուր ծավալը 2005-2014թթ. ընթացքում տարեկան աճել է միջինը 7.2%-ից

8.1%՝ 2014թ. հասնելով 620 միլիարդ ԱՄՆ դոլարից մինչև 970 միլիարդ ԱՄՆ դոլարի հաշվարկված մակարդակներին:¹⁵⁰ Հայաստանում ԱՖՀ-երը 2005թ. 514 միլիոն ԱՄՆ դոլարից աճել են՝ հասնելով 1.848 միլիարդ ԱՄՆ դոլարի 2013 թվականին: Այս ժամանակահատվածում՝¹⁵¹ ԱՖՀ-երի ընդհանուր ծավալը երկրում հասավ ավելի քան 9.8 միլիարդ ԱՄՆ դոլարի, ինչի արդյունքում Հայաստանը 149 երկրների շարքում դասվեց 70-րդ տեղում:¹⁵² Ապօրինի ֆինանսական միջոցների արտահոսքը կտրուկ մեծացավ 2008թ. ճգնաժամից առաջ՝ կազմելով 1.15 միլիարդ ԱՄՆ դոլար (աճ 43.3%-ով), սակայն 2009թ. այն կրճատվեց 19.8%-ով: 2010 թվականին ապօրինի ֆինանսական միջոցների արտահոսքը կրկին սկսեց աճել և 2013 թվականին հասավ 1.8 միլիարդ ԱՄՆ դոլարի:¹⁵³

Երկրի ՀՆԱ-ում տոկոսային արտահայտմամբ ԱՖՀ-ի հաշվարկների վերլուծությունը ԱՖՀ-երի այլ հեռանկար է տալիս, քան միայն ծավալը, քանի որ ցույց է տալիս այս դինամիկայի պոտենցիալ ազդեցությունը տնտեսության վրա:¹⁵⁴ Հայաստանում ԱՖՀ-երի տոկոսը ՀՆԱ-ում շարունակել է բարձր մնալ 2005 թվականից (ՀՆԱ-ի 10%-ը): Ըստ հաշվարկի ամենացածր ցուցանիշը եղել է 2006 թվականին (ՀՆԱ-ի 8%-ը), որից հետո ցուցանիշը սկսել է բարձրանալ՝ հասնելով իր բարձրակետին 2013 թվականին (ՀՆԱ-ի 17%-ը): Ապօրինի հոսքերը երկրի զարգացման ամենաէական արգելափակիչներն են այն դեպքում, երբ դրանց համամասնությունը ՀՆԱ-ի հետ 10%-ից բարձր է:¹⁵⁵

Զարգացող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, ԱՖՀ-երը նշանակում են ավելի քիչ թվով հիվանդանոցներ, դպրոցներ, ուստիկանության աշխատանքի անարդյունավետություն, չկառուցված ճանապարհներ ու չվճարված կենսաթոշակներ, ինչպես նաև ավելի քիչ աշխատատեղեր:¹⁵⁶ ՏՀԶԿ-ն և բազմաթիվ այլ միջազգային կազմակերպություններ նշել են, որ յուրացման, պետական միջոցներն այլ ուղղությամբ ծախսելու և պետական գանձարանի կորուստման արդյունքում առաջացող ֆինանսական արտահոսքերից առկա է հստակ «ուղեկցող վաաս»:¹⁵⁷

ԱՖՀ-երի հետ կապված ակտիվների միայն մի մասի առգրավման և բռնագրավման վրա մեծ ուշադրության կենտրոնացումը Հայաստանում էականորեն կնպաստեր զարգացման արագությանը՝ հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ վերականգնված ակտիվները լիկվիդացվում և արդյունավետորեն ուղղվում են զարգացման խիստ առաջնահերթ կարիքների բավարարմանը: Հաջորդ բաժնում համառոտ ներկայացվում են առանցքային ոլորտների զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև Հայաստանում զարգացման հնարավորությունները, եթե կառավարությունը կարևորեր երկրում ԱՖՀ-երի միջոցով կորած ակտիվների ընդամենը 10%-ի վերականգնումը:

4.3 Վերականգնված ակտիվների ներդրումը Հայաստանի զարգացման համար

Հայաստանի 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (ՀՉՕ)¹⁵⁹ պետական քաղաքականությունների մշակման ռազմավարական շրջանակն է և ունի չորս հիմնական գերակայություն.


- 1) Զբաղվածության ընդլայնում (բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում),
- 2) Մարդկային կապիտալի զարգացում (առաջնային ծառայությունների ծավալների, որակի և մատչելիության աճ, ինչպես նաև մասնագիտական աճ, քաղաքացիական դաստիարակություն և մշակույթի մակարդակի ավելացում),
- 3) Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում (գործող համակարգերի արդյունավետության բարձրացում, սոցիալական երաշխիքների տրամադրում, սոցիալական ռիսկերի նվազում և աղքատության կրճատում և սոցիալական աջակցության դրամական ձևերից աստիճանական անցում կարիքների վրա հիմնված սոցիալական աջակցության տրամադրմանը),
- 4) Պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացման գործողություններ

(քաղաքականությունների ընդունում, որոնք միտված են պետության արդյունավետության աճին, պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների նպատակային օգտագործմանը, տրամադրվող ծառայությունների որակի և մատչելիության ավելացմանը, կոռուպցիայի նվազեցմանը, որոշումների ընդունման թափանցիկության և այդ գործընթացների քաղաքացիական հասարակության մասնակցության աստիճանի մեծացմանը):

Հայաստանը ԿՉՆ-ի իրականացման գործընթացում խառը արդյունքներ է գրանցել. Թեև մի շարք ոլորտներում մեծ առաջընթաց կա (օր.՝ մոր և մանկան առողջության պահպանում, ջրամատակարարում, քաղաքային բնակավայրերի սանիտարական միջոցառումներ, հուսալի և վերականգնելի էներգիա և շրջակա միջավայրի պահպանություն), կա մի քանի ոլորտ, որոնց առաջընթացը դանդաղ է (օր.՝ աղքատություն, կրթություն, զենդեռային հավասարություն, ջրօգտագործում, հողերի դեգրադացիա, գյուղական բնակավայրերի սանիտարական միջոցառումներ, կառավարում և սպառման ու արտադրական կայուն գործելակերպեր):

Հայաստանը առանձնակի խնդիրների է բախվում պետական ներդրումների հարցում.¹⁶⁰ առողջապահության, էներգետիկայի և ճանապարհաշինության ոլորտներում կան պետական ներդրումների արդյունավետության էական բացեր փաստացի արտադրողականության և որակի առումով: Բացի այդ, պետական խոշոր ներդրումային ծրագրերի համար ավելի ու ավելի շատ է արտաքին ֆինանսավորում ակնկալվում:

ԱՖՅ-երը Հայաստանում 2005-2013թթ. (տարեկան և կուտակային)



Աղբյուրներ՝ Համաշխարհային բանկի և ՄՖԲ (2015) տվյալների հիման վրա¹⁵⁸

Առողջապահության ոլորտ


Հայաստանում առողջապահական ոլորտը կենտրոնացած է մայրաքաղաքում: Կանխիկ վճարումների ծավալը շարունակում է բարձր մակարդակի վրա մնալ (առողջապահական ընդհանուր ծախսերի 80%-ից ավելին), ինչը կրճատում է հիմնական ծառայությունների մատչելիությունը աղքատ տնային տնտեսությունների համար, հատկապես՝ ստացիոնար բուժման և դեղամիջոցների դեպքում: Ծնելիության ցուցանիշը Հայաստանում շարունակում էր ցածր մնալ (2018թ. տվյալներով՝ 1.6 երեխա մեկ կնոջ հաշվով), իսկ մայրական մահացության ցուցանիշը նվազել էր 2017թ. հասնելով 18.3 դեպքի 100 000 կենդանի ծնունդի հաշվով: Մտահոգիչ է այն, որ հիմնական առողջապահական ծառայությունների մատչելիությունը սահմանափակ է, հատկապես՝ կանանց համար: Ծխախոտի և ալկոհոլի փաստակար օգտագործման, շաքարախտի, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, տուբերկուլոզի, հեպատիտի և սեռավարակների դեմ պատվաստման ու բուժման, ինչպես նաև հոգեկան առողջության (առողջապահությանը հատկացվող բյուջեի միայն 3.0%-ը նախատեսված է հոգեկան առողջության խնդիրների համար) բնագավառներում

պետական ծրագրերի իրականացման շարունակումը մնում է որպես առաջնահերթություն:¹⁶¹

Եթե Հայաստանը հաջողությամբ իրականացնի երկրում ենթադրաբար տարեկան շրջանառվող ԱՖՀ-երի միջին ծավալի միայն 10%-ի (ամենավերջին առկա տվյալներով՝ մոտ 180 միլիոն ԱՄՆ դոլար) ազդեցությունը և բռնագրավումը, դա կառավարությանը թույլ կտար ամբողջությամբ ֆինանսավորել Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի պլանավորված վերակառուցումը (ըստ նախահաշվի՝ 7.3 միլիոն ԱՄՆ դոլար, 350-ից 500 մահճակալով), ինչպես նաև բուրբուխի նոր բժշկական սարքավորումներով ինը բժշկական կենտրոնի կառուցումը / վերակառուցումը (յուրաքանչյուրը միջինը 5 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ և 35-65 մահճակալ ամեն կենտրոնում): Այսպիսի վերականգնված ակտիվներով հնարավոր կլինի ամբողջությամբ ֆինանսավորել նաև ավելի քան 100 գյուղական ամբուլատոր բժշկական կենտրոնների կառուցումը և սարքավորումներով հագեցումը, որոնք կապահովվեն առաջնային բուժօգնության ծառայություններ:

Ինչպես կարող են վերականգնված ակտիվները նպաստել Հայաստանի առողջապահության ոլորտի ուժեղացմանը

Հանցավոր գործունեության հետ կապված ԱՖՀ-երի հետևանքով Հայաստանի կրած միջին տարեկան վնասները (ըստ հաշվարկների՝ ընդհանուր 1.8 միլիարդ ԱՄՆ դոլար)



ԵԹԵ ԵՐԿՐԻ ԱՖՀ-ԵՐԻ ՄԻԱՅՆ 10%-Ը ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱԴՆԱՐՉՎԵՐ, ԱՅՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԿԱՌՈՒՑՎԵՐ



Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնը

և



9 բժշկական կենտրոն հագեցած նոր բժշկական սարքավորումներով

և



Ավելի քան 100 գյուղական ամբուլատոր կենտրոն

Կրթական ոլորտ


2019 թվականին կրթության համար պետության կատարած ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 7.9%-ը՝ նվազելով 2015 թվականի 8.7% ցուցանիշից: Կրթության որակը վատանում է, ինչը մաշվող ենթակառուցվածքների և դպրոցների վատ կառավարման հետ միասին բացասաբար է անդրադառնում կրթության արդյունքների վրա: Շեշտվել է արդյունքների բարելավման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ բնական գիտությունների (գիտություն, տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն և մաթեմատիկա) բնագավառում:¹⁶²

Եթե Հայաստանը հաջողությամբ իրականացներ երկրում ենթադրաբար տարեկան շրջանառվող ԱՖՀ-երի միջին

ծավալի միայն 10%-ի (ամենավերջին առկա տվյալներով՝ մոտ 180 միլիոն ԱՄՆ դոլար) առգրավումը և բռնագրավումը, դա կառավարությանը թույլ կտար վճարել 38 000 ուսուցչի մեկ տարվա տարեկան աշխատավարձը, որն ամսական 75%-ով կգերազանցեր 225 ԱՄՆ դոլար նվազագույն աշխատավարձի չափը:¹⁶³ Կամ վերականգնված ակտիվներով հնարավոր կլիներ ամեն տարի վճարել ավելի քան 50 դպրոցի ամրացման և վերակառուցման ծախսերը (ընթացիկ գներով), ինչի արդյունքում այդ դպրոցները կլինեին սեյսմակայուն, և ավելի քան 60 000 աշակերտ կօգտվեր այդ բարելավումներից:¹⁶⁴

Ինչպես կարող են վերականգնված ակտիվները նպաստել Հայաստանի կրթական ոլորտի ուժեղացմանը

Հանցավոր գործունեության հետ կապված ԱՖՀ-երի հետևանքով Հայաստանի կրած միջին տարեկան զնախնդր (ըստ հաշվարկների՝ ընդհանուր 1.8 միլիարդ ԱՄՆ դոլար)



Տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտ

Երկաթգծային և ճանապարհային ենթակառուցվածքները նույնպես տուժում են ներդրումների պակասի և ոչ լիարժեք պահպանման հետևանքով, ինչը բացասաբար է ազդում մարդկանց և ապրանքների փոխադրումների վրա, ինչպես նաև նվազեցնում է ճանապարհների անվտանգությունը:

Եթե Հայաստանը հաջողությամբ առգրավեր և բռնագրավեր երկրում ենթադրաբար տարեկան շրջանառվող ԱՖՀ-երի միջին ծավալի միայն 10%-ը (ամենավերջին առկա տվյալներով՝ մոտ 180 միլիոն ԱՄՆ դոլար), դա կառավարությանը թույլ կտար ֆինանսավորել կարևոր ենթակառուցվածքային ծրագրեր, այդ թվում, օրինակ, ամեն տարի ավելի քան 430 կիլոմետր երկարությամբ ճանապարհների վերանորոգումը (մեկ կիլոմետրի արժեքը չափավոր հաշվարկվել է 418 000 ԱՄՆ դոլար):¹⁶⁵


Չնայած կառավարությունը հետևողականորեն իրականացրել է տրանսպորտային ենթակառուցվածքի պահպանումը՝ դիտարկելով այն որպես գերակայություն, սակայն ներքին

տրանսպորտային ցանցի որակը պահպանմանն ուղղվող ներդրումների բացակայության պատճառով վատթարացել է: Երկրի 1329 կմ երկարությամբ երկաթուղային գծերի միայն 500 կմ-ն է աշխատանքային վիճակում: Նույնիսկ գործառնական բաժանմունքները պահպանման և արդիականացման կարիք ունեն: Հայաստանի ճանապարհային ցանցը նույնպես վատ վիճակում է, ինչը նպաստում է ճանապարհային անվտանգության մշտական գոյություն ունեցող խնդրի խորացմանը:

Որակի և արտադրողականության այս թերությունները զալիս են տրանսպորտային ենթակառուցվածքում ոչ բավարար չափով ներդրումներ կատարելուց: Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանի մեկ շնչի հաշվով

Ինչպես կարող են վերականգնված ակտիվները նպաստել Հայաստանի ենթակառուցվածքների ուժեղացմանը

Հանցավոր գործունեության հետ կապված ԱՖՀ-երի հետևանքով Հայաստանի կրած միջին տարեկան վնասները (ըստ հաշվարկների՝ ընդհանուր 1.8 միլիարդ ԱՄՆ դոլար)



ենթակառուցվածքային ներդրումների չափը տատանվել է և 2008-2016թթ. երբեք չի գերազանցել 50 ԱՄՆ դոլարը մեկ շնչի հաշվով: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում տրանսպորտային ենթակառուցվածքի ներդրումները Ադրբեջանում կազմել են միջինում տարեկան 126 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով և Վրաստանում՝ միջինում տարեկան 101 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով: Հայաստանում ներքին տրանսպորտային ցանցի

ներդրումներն ավելի շատ կենտրոնացվել են ճանապարհային ցանցի, քան երկաթուղային տրանսպորտի ուղղությամբ: Վերջին տարիներին ընդհանուր ներդրումներում երկաթուղու մասնաբաժինը զգալիորեն նվազել է:

Ադրբյուրներ՝ ԱԶԲ (2019թ.), Տեխնիկական աջակցություն. Տրանսպորտի և առևտրի խթանման 2020-2040թթ. ռազմավարություն (Հայաստան), Ասիական զարգացման բանկ, Մանիլա: ՄՏՖ (2019թ.), Փոխադրումների ծավալի ցուցանիշներ, https://www.oecd-ilibrary.org/transport/data/itf-transport-statistics/transport-performance-indicators_2122fa17-en:

5. Եզրակացություններ և առաջարկություններ



Այս հետազոտության մեջ ուսումնասիրվել է Հայաստանում ԱՖՀ-երի և դրանց հետ կապված հանցագործությունների ծանր բացասական ազդեցությունը, և ընդգծվել են որոշ ոլորտային կարիքներ, որոնք կարելի է զգալիորեն բավարարել, եթե կառավարությունը ԱՖՀ-երի և ապօրինաբար ձեռք բերված ակտիվների զավթումը դիտարկի որպես գերակայություն: ԱՖՀ-երի երկրին պատճառած հետագա ծախսերը նվազեցնելու և դրանք կանխարգելելու համար կարևոր է ակտիվների վերականգնման արդյունավետ քաղաքականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ուսումնասիրությունը պետական մարմիններին և այլ առանցքային շահագրգիռ կողմերին ներկայացնում է հետևյալ առաջարկությունները՝ օգնելու կատարելագործել ապօրինաբար ձեռք բերված ակտիվների արդյունավետ և թափանցիկ վերականգնման գործընթացը, կանխարգելել ԱՖՀ-երը և խթանել առավել արագ տեմպերով զարգացում երկրի ներսում:

1. Հրապարակել հատակ և միանշանակ հայտարարություններ ԱՖՀ-երի/ՓԼ դեմ պայքարի և ակտիվների վերականգնման միջոցառումների վերաբերյալ

Հրապարակել հատակ և միանշանակ հայտարարություններ և քաղաքականություններ ԱՖՀ-երի/ՓԼ դեմ պայքարի և կառավարության կողմից կազմակերպված հանցավոր գործունեության հետ կապված ակտիվների առգրավումը և բռնագրավումը (պատշաճ ընթացակարգով) որպես գերակայություն դիտարկելու առնչությամբ:

2. Մահմանել և իրականացնել մեխանիզմներ, որոնք կբարելավեն նման ակտիվների առգրավման և բռնագրավման գործընթացը, ինչպես նաև կառավարումը

Մահմանել և իրականացնել մեխանիզմներ, որոնք կբարելավեն ակտիվների առգրավման, բռնագրավման, լիկվիդացիայի և միջոցները զարգացման խիստ առաջնահերթ կարիքներին մեծ թափանցիկությամբ ուղղելու գործընթացների արդյունավետությունը (քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում նույնացված և քաղաքացիներից պարբերաբար ստացվող կարծիքների միջոցով նույնացված կարիքներ):

3. Ընդլայնված բռնագրավման կիրառումը ընդունել որպես նորմա քրեական արդարադատության համակարգում

Անհրաժեշտ է դիտարկել քրեական արդարադատության համակարգում ընդլայնված բռնագրավման կիրառումը

որպես նորմա, այլ ոչ որպես բացառություն ընդունելը և իրականացնելը, ինչը դատարանին թույլ կտա զգալի ֆինանսական հոսքեր ստեղծող որոշակի լուրջ հանցագործությունների համար մեղադրական դատավճռի առկայության դեպքում հրաման արձակել առ այն, որ առկա է իրավական պրեզումպցիա, որի համաձայն մեղադրյալի, օրինակ, անցած հինգ տարվա ընթացքում ձեռք բերած ԲՈՒՈՐ եկամուտները և ակտիվները պետք է համարվեն ապօրինաբար ձեռք բերված, քանի դեռ իրավունքի սուբյեկտը չի կարողացել ապացուցել, որ գույքը ձեռք է բերվել օրինական միջոցներով, օրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվներով և բարեխղճորեն:

4. Համարժեք գույքի բռնագրավման կիրառումը ընդունել որպես նորմա քրեական արդարադատության համակարգում

Անհրաժեշտ է հաշվի առնել քրեական արդարադատության համակարգում օրինական ճանապարհով ձեռք բերված համարժեք ակտիվների բռնագրավման օրդերների կիրառումը որպես նորմա, այլ ոչ որպես բացառություն ընդունելը և իրականացնելը այն դեպքերի համար, երբ մեղադրյալի ապօրինի ձեռք բերված ակտիվները հնարավոր չէ ողջամիտ ձևով գտնել, կամ որոնք մեղադրյալը կամ ուրիշները սպառել են: Մա համահունչ է այն սկզբունքին, որ հանցագործությունը պետք է պատժվի:

5. Ապահովել, որ քրեական արդարադատության համակարգը կարողանա շարունակել եկամուտ ստեղծող լուրջ հանցագործությունների համար մեղադրվող անձանց ակտիվների դեմ վարույթը նույնիսկ այն դեպքերում, եթե.

- մեղադրյալը խուսափում է արդարադատությունից (եթե պետությունը ցույց է տալիս դատարանին, որ գործադրել է բոլոր ողջամիտ ջանքերը մեղադրյալին իր դեմ հարուցված դատական վարույթի մասին ծանուցելու համար),
- մեղադրյալը մահանում է նախքան դատական քննության ավարտը կամ
